ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Գրասենյակի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, փ. Բաղրամյան 18

«ՇԻՆ ՇՈՂԻԿ» ՃԱՄԲԱՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

3-ՐԴ ՓՈՒԼ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2025Թ. ԱՊՐԻԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 7
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 7
3.1. Տեխնիկական լուծումներ 8
3.2. ՄՈՒՏՔԻ ՆԱԽԱԳԻԾ 13
3.3. ՍՆԿԱՁԵՎ ՏԱՂԱՎԱՐ 16
3.4. «ՊՈՂՊԱՏՅԱ ՇԱՏՐՎԱՆ» 17
3.5. «Մարզահրապարակներ» 18
3.6. Ճարտարապետական փոքր ձևեր 19
3.7. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ 22
3.8. Շին Շողիկ ճամբարի բարեկարգման և մասնակի վերակառուցման մասով աշխատանքների ծավալ և նյութական ռեսուրսներ 24
4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ 32
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴԹՎՈՒՄ՝ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 32
5.1. Ծրագրի տարածքում գոյություն ունեցող իրավիճակ 32
5.2. ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 42
5.3. ԿԼԻՄԱ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ 44
5.4. Մթնոլորտային օդ 51
5.5. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 52
6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 63
6.1. Հողաբուսական ծածկույթ և ֆլորա 63
6.2. ՖԱՈՒՆԱ 66
7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 68
8. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանություն 69
9. Սոցիալ-տնտեսական պայմաններ 71
10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 73
10.1. Մթնոլորտային օդն աղտոտող արտանետումներ 73
10.1.1. Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ 74
10.1.2. Մթնոլորտային օդ արտանետումների հաշվարկներ 75

10.1.2.1. Փոշու արտանետումներ....75
10.1.2.1.1. Փորման-բեռնման աշխատանքներից արտանետումներ....75
10.1.2.1.2. Մեքենամեխանիզմների շահագործումից փոշու արտանետումներ....76
10.1.2.2. Դիզելային վառելիքի այրումից առաջացող արտանետումներ....78
10.2. Ջրօգտագործում և ջրահեռացում....82
10.3. Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար....82
10.4. Տեխնիկական ջրօգտագործում....83
10.5. Տեխնիկական ջրահեռացում....83
10.6. Հողօգտագործում....84
10.7. Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում....84
10.8. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն....86
10.9. Շինհրապարակում սանիտարակենցաղային պայմաններ....88
10.10. Արտակարգ իրավիճակներ....89
10.11. Հողի էրոզիա....90
10.12. Աղմուկ և Թրթռումներ....90
10.12.1. Աշխատատեղերում, մոտակա բնակելի տարածքում առաջացող աղմուկի հաշվարկ....92
10.12.1.1. Աղմուկի մակարդակի հաշվարկ հարակից «Զեփյուռ»ճամբարի համար....94
10.12.1.2. Աղմուկի մակարդակի հաշվարկ մոտակա բնակելի տան համար....94
10.12.2. Աշխատատեղերում, մոտակա բնակելի տարածքում առաջացող թրթռումների հաշվարկ....96
10.13. Թափոններ....98
10.14. Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություն....102
10.15. Շահագործման փուլ....102
10.16. Շինարարի կողմից պատրաստվող փաստաթղթեր....102
10.17. Ուսուցում....102
10.18. Ռիսկերի նվազեցման և մոնիթորինգի պլան....103
11. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ....103
11.1. Ընդհանուր հանրային բողոքների կարգավորման մեխանիզմ....103
11.2. Աշխատողների բողոքների կարգավորման մեխանիզմ....104
11.3. Պատասխանատվությունների շրջանակ....104
11.4. Բողոքների մշտադիտարկում և հաշվետվողականություն....105
12. Հաշվետվությունների ներկայացում....105

13. Հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական կառավարման մարմինների նախնական համաձայնություն.....105
14. Բնապահպանական, սոցիալական, աշխատանքի առողջության և անվտանգության միջոցառումների ծրագիր.....106
15. Մշտադիտարկման և հետնախագծային վերլուծության ծրագիր.....113

Հավելված 1՝ «Հանրային լսումների արձանագրություն և մասնակիցների ցուցակ, ինչպես նաև Ավագանու որոշում, ճամբարի տարածքի սեփականության վկայական».....122
Հավելված 2՝ Բողոքի գրանցամատյան.....128
Հավելված 3՝ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՅԱՆ.....129
Հավելված 4՝ ՀԷՑ-ի կողմից տեխպայմաններ.....130
Հավելված 5՝ Ջրօգտագործման թույլտվություն.....131
Հավելված 6՝ Շին Շողիկ ճամբարի 3-րդ փուլի նախագիծ- ԱԼԲՈՄ 1-ից մինչև 7.....132
Հավելված 7. Ճարտարապետահատակագծային առաջադրանք.....133

Պատկեր1՝ Շին Շողիկ ճամբարի մասնակի վերակառուցումից և բարեկարգումից հետո ընդհանուր տեսք.....10
Պատկեր2՝ Շին Շողիկ ճամբարի մասնակի վերակառուցման և բարեկարգման դենդրոպլան.....12
Պատկեր3՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո մուտքային հանգույց.....16
Պատկեր4՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո սնկաձև տաղավարի տեսք.....17
Պատկեր5՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո պողպատյա շատրվանների տեսք.....18
Պատկեր6՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո ֆուտբոլի մարզադաշտի տեսարան.....19
Պատկեր7՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո թենիսի կորտի տեսարան.....19
Պատկեր8՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո նստարանի տեսք.....20
Պատկեր 9՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո նստարանի տեսք.....20
Պատկեր 10՝ Շին Շողիկ ճամբարի բերակարգումից և մասնակի վերակառուցումից հետո ծաղկամանների տեսք.....21
Պատկեր 11՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո դեկորատիվ սալահատակ.....22
Պատկեր 12՝ Պատկեր 11-ի բաղադրիչների նկարագրություն.....22
Պատկեր13՝ Հողային տիպեր.....64

Պատկեր14՝ Լանդշաֆտային գոտիներ.....65
Պատկեր 15՝ Ջրաերկրաբանական հուշարձան "Հաղպրտանք" աղբյուրի հեռավորությունը ճամբարի տարածքից և տեղադիրքը.....69
Պատկեր 16 ՝ Մոտակա բնակելի տան հեռավորությունը «Շին Շողիկ» ճամբարից
Պատկեր17՝ Բողոքների կարգավորման մեխանիզմ.....104

Աղյուսակ 1: Տարածքի WGS գեոդեզիական համակարգով կոորդինատներ.....33
Աղյուսակ 2: Օդի միջին ջերմաստիճան.....45
Աղյուսակ 3:Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը....46
Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավություն.....47
Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումներ.....48
Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա).....49
Աղյուսակ 7: Քամի (արդիականացման ենթակա).....49
Աղյուսակ 8 ՀՀ որոշ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ (հնգամյա միջին).....51
Աղյուսակ 9՝ Դիզվառելիքի սպառման ծավալ.....78
Աղյուսակ 10: տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք).....79
Աղյուսակ 11՝ Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների հաշվարկ80
Աղյուսակ 12՝ Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ընդհանուր քանակ.....81
Աղյուսակ 13՝ Բնակելի սենքերում, հիվանդասենյակներում եվ հանգստյան տներում թրթռման թույլատրելի մակարդակներ.....96
Աղյուսակ 14՝ Աշխատատեղերում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակ.....96
Աղյուսակ 15: Շինաշխատանքների ընթացքում առաջացող թափոնների տեսակներն ու քանակները.....100

Հապավումներ

կՎ	կիլովոլտ
ՕԳ	Օդային գիծ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԱԱԱ	Աշխատանքի անվտանգություն և առողջություն
ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ԲՍԱԱԱ	Բնապահպանական, սոցիալական, աշխատանքի առողջություն և անվտանգություն

ՀԷՑ	«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկող	Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղ
Ձեռնարկողի գործունեության հասցեն	ՀՀ, ք. Երևան, փ. Մ. Բաղրամյան 18
Ձեռնարկողի էլեկտրոնային հասցե	babayanraya.87@gmail.com
Ձեռնարկողի հեռախոսահամար	+374-99-10-15-68
Նախատեսվող գործունեության հասցեն	ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գ. Փյունիկ 1-ին փողոց, 1-ին փակուղի 1
Նախատեսվող գործունեության տեսակը	Մանկական ճամբարների գործունեություն
Աշխատանքային նախագծեր մշակող	Էրիկ Օհանյան՝ ՄԱՏԻՏ ՍՊԸ տնօրեն

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող գործունեության անվանումն է «ՇԻՆ ՇՈՂԻԿ ՃԱՄԲԱՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, 3-րդ փուլ»:
5.81 հա տարածք զբաղեցնող ճամբարի 3.98 հա տարածքն արդեն իսկ բարեկարգված է, իսկ այս փուլում պետք է բարեկարգվի և վերակառուցվի մնացած 1.83 հատարածքը:

Ըստ 2023թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀօրենքի հոդված 12-ի, 4-րդ մասի, 8-րդ կետի՝ «Քաղաքաշինության բնագավառ», «գ» ենթակետի՝ «բարեկարգում՝ 1000քմ և ավելի անջրանցիկ մակերեսի դեպքում» նախատեսվող գործունեությունը **դասվում է Բ կատեգորիային** և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող գործունեության **նպատակն է** զարգացնել համայնքի սոցիալտնտեսական վիճակը, նպաստել երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացմանը և սոցիալականացմանը, բարելավել երեխաների հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ բնության գրկում զբոսանքների, սպորտաձևերի, բացօթյա կինոդիտումների միջոցով, հարստացնել երեխաների ներաշխարհը հոգևոր զրույցների, արվեստի տարբեր ճյուղերի հետ ծանոթացման եղանակով և այլն:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1.Տեխնիկական լուծումներ

5.81 հա տարածք զբաղեցնող ճամբարը կառուցված և ցանկապատված է: Ճամբարի տարածքի կեսը բարեկարգված է: Ճամբարի վերակառուցման և բարեկարգման 3-րդ փուլի նախագծով նախատեսված է բարեկարգել ճամբարի **մնացած 1.83 հա մասը,** ինչպես նաև ավարտին հասցնել նախորդ փուլերից անավարտ մնացած աշխատանքները:

Բարեկարգման աշխատանքները, հիմնականում հանդիսանում են արդեն կատարված աշխատանքների շարունակություն, ուստի դրանք պետք է կատարվեն արդեն արվածին համահունչ:

Նախատեսված են հետևյալ աշխատանքները՝

1. քանդել առկա մեկ հարկանի չօգտագործվող և խարխուլ օժանդակ կառույցները
2. քանդել առկա ասֆալտե ճանապարհներն ու հարթակները և դրանց փոխարեն իրականացնել քարից և մայթասալիկից սալահատակները
3. քանդել առկա պահակակետը և դրա փոխարեն իրականացնել մուտքային հանգույց՝ կից ավտոկայանատեղիներով, իսկ նկուղային հարկում՝ ոռոգման պոմպակայան: Ավտոմեքենաների մուտքը դեպի ճամբար կսահմանափակվի այդ ավտոկայանատեղիով
4. քանդել առկա շվաքարանները և դրանց փոխարեն իրականացնել մետաղյա կարկասով սնկաձև տաղավարներ՝ 7 հատ
5. քանդել առկա ցանկապատը և դրա փոխարեն իրականացնել նոր պողպատյա ճաղապատ ցանկապատ 1.8մ բարձրությամբ
6. քանդել առկա դահլիճային շենքի տանիքի ծածկույթն ու իրականացնել նորը
7. կտրել առկա չորացած, տապալման ենթակա և փտած հիմքով ծառատեսակները և տնկել 250 հատ նոր դեկորատիվ ծառեր
8. տեղափոխել և վերատնկել առկա փոքր ծառերը՝ 70 հատ
9. իրականացնել դեկորատիվ ճարտարապետական ֆորմաներ

10. կառուցել ֆուտբոլի մարզադաշտ՝ ցակապատված 3.5մ բարձրությամբ թափանցիկ ցանկապատով
11. կառուցել թենիսի կորտ՝ ցանկապատված 5մ բարձրությամբ թափանցիկ ցանկապատով
12. ճաշարանի ետնամասում կառուցել մեկ հարկանի պահեստային մասնաշենք և ավտոպարկ:

Բնականոն աշխատանքն ապահովելու համար ճամբարի երկայնական ցանկապատերի երկայնքով նախատեսված են ճանապարհներ, որոնցից մեկը գրունտային է: Մնացյալ ամբողջ տարածքը նախատեսված է հետիոտնային շարժման համար:

Մուտքային հանգույցից սկսում է գլխավոր ճեմուղին, որը ձգվում է մինչև ամֆիթատրոն: Այն նախատեսված է իրականացնել հիմնականում բնական քարերի տարբեր շարվածքներով արանքներում ունենալով սիզամարգային ընդհատումներ:

Բարեկարգման աշխատանքներից զատ նախատեսված է կառուցել նաև ֆուտբոլի մարզահրապարակ, թենիսի կորտ, տաղավարներ և դեկորատիվ-գեղարվեստական կառուցվածքներ:

Ըստ էսքիզային և աշխատանքային նախագծերի, նախատեսված է նաև վերանորոգել H28 ճանապարհից դեպի ճամբար մոտեցնող ճանապարհահատվածը և կամրջի ծածկույթը:

Ինժեներական ենթակառուցվածքներից նախատեսված է ոռոգման ցանց և արտաքին լուսավորություն:

Արտաքին լուսավորության ստանդարտ լուսատուներից բացի նախատեսված են նաև պատրաստվող լուսատուներ, որոնց համար տրված են գծագրեր: Դրանք նախատեսված են պատրաստել 40մմ տրամագծով չժանգոտվող պոպատյա խոովակից՝ կորացված և տարբեր բարձրությունների, որոնց վրա պետք է տեղադրել ապակյա գնդեր:



Պատկեր1՝ Շին Շողիկ ճամբարի մասնակի վերակառուցումից և բարեկարգումից հետո ընդհանուր տեսք

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հողային աշխատանքների արդյունքում կիրականացվի՝

- հանույթ՝ 1650մ^3
- լիցք՝ 2806մ^3
- պակասորդ՝ 1156մ^3

Նախատեսվում է բարեկարգվող տարածքի **համահարթեցում**, որի ընթացքում նախագծում նշված 0 նիշից բարձր նիշերի հողերը կտեղափոխվեն 0 նիշից ցածր տարածքներ՝ ապահովելով մեկ ընդհանուր 0 նիշ:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախատեսվում է՝


- Մակերեսային ճիմապատում՝ 17070մ^2
- Գծային ճիմապատում 50մմ լայնությամբ՝ 896գմ
- Գծային ճիմապատում 100մմ լայնությամբ՝ 372գմ

Ընդհանուր ճիմապատման աշխատանքների ծավալը կազմում է ՝ 17152 մ^2

3-րդ փուլի աշպատանքների ընթացքում նախատեսված է նաև 250 հատ նոր դեկորատիվ ծառերի տնկում՝

1. Ձիակասկ
2. Սոսի
3. Թխկի սոսիատերև
4. Կատալպա
5. Ալբիցիա
6. Ուռենի
7. Եղևնի
8. Կելրեյթերիա հուրանավոր
9. Ձիակասկ կարմիր ծաղիկներով
10. Հուդայածառ
11. Փշատ
12. Լաբուրնում
13. Ակացիա գնդաձև
14. Թխկի կարմիր
15. Թխկի գնդաձև
16. Եղրևանի
17. Հիբիսկուս
18. Ասպիրակ
19. Լավանդա
20. Ֆորզիցիա
21. Բարբարիս
22. Բուդլեա

Պատկեր2՝ Շին Շողիկ ճամբարի մասնակի վերակառուցման և բարեկարգման դենդրոպլան



<u>Ճամբարի տարածքի տեխնիկական ցուցանիշները՝</u>

Հողամասի մակերեսը՝ 5.81 հա

1. **Առկա կառուցապատման մակերեսը՝ 4407մ^2**
2. պահպանվող շինություններ՝ 3815 մ^2
3. **քանդվող շինություններ՝ 592մ^2**

   այդ թվում՝

   - քանդվող քարե շինություններ՝ 208մ^2
   - քանդվող փայտե շինություններ՝ 135մ^2
   - քանդվող մետաղյա շվաքարաններ՝ 249մ^2

<u>Վերակառուցված կառուցապատման մակերես՝ 4495մ^2(7.74%)</u>

այդ թվում՝

- առկա պահպանված շինություններ՝ 3815մ^2
- <u>նոր կառուցվող շինություններ՝ 396մ^2</u>
- <u>նոր կառուցվող շվաքարաններ՝ 320մ^2</u>

Ճանապարհի, սալահատակների և այլ անջրանցիկ տարածքների առկա ընդհանուր մակերեսը՝ 9487մ²

այդ թվում՝

- պահպանվող՝ 8651մ²
- քանդվող՝ 836մ²

Ճանապարհների, սալահատակների և այլ անջրանցիկ տարածքների վերակառուցված ընդհանուր մակերեսը՝ 14388մ² (24.76%)

այդ թվում՝

- պահպանված՝ 8651մ²
- նոր կառուցվող՝ 5737մ²

այդ թվում՝

- հետիոտնային սալիկապատ ուղիներ՝ 3427մ²
- ավտոմեքենայի բետոնյա ճանապարհ՝ 2310մ²

բացօթյա մարզահրապարակների ընդհանուր մակերեսը՝ 2944մ² (5.07%)

այդ թվում՝

- բնական սիզամարգով ֆուտբոլի դաշտ՝ 2300մ²
- թենիսի բետոնյա կորտ՝ 644մ²

կանաչապատման մակերեսը՝ 34035մ² (58.58%):

3.2. ՄՈՒՏՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Մուտքային հանգույցը նախատեսված է գոյություն ունեցող քանդման ենթակա պահակակետի տեղում: Մուտքի հարևանությամբ դրսում նախատեսված է բացօթյա ավտոկայանատեղի 6 ավտոմեքենայի համար, ևս 18 ավտոկայանատեղի նախատեսված է ճամբարի տարածքում:

Տեղանքի բնակլիմայական պայմաններից թելադրված հիմքի խորությամբ տեխնիկական նկուղն օգտագործվում է որպես ոռոգման պոմպակայան:

Պատերը միաձույլ երկաթբետոնյա են, ջերմամեկուսացված դրսից և երեսպատված կանոնավոր տեսքի բերած դաշտային քարերով: Որպես ջերմամեկուսիչ նյութ նախատեսված է էքստրուդացված փրփրապոլիստիրոլը, պատերում 10սմ հաստությամբ, իսկ տանիքում՝ 12սմ: Ջերմամեկուսիչը պատերին ամրացվում է LITIKOL սոսնձով և պլաստիկ խցաբութակով (дюбель): Մուտքի դռան վերին մասում պատի հատվածը նախատեսված է հարդարել Ceresit դեկորատիվ սվաղով:

Արտաքին ծածկերը տակից և կողաճակատներից նախատեսված են առանց հարդարման, դրանք պետք է լինեն ճարտարապետական բետոն:

Հատակները նախատեսված են կերամոգրանիտից:

Պատուհանները թերմոալյումինից են՝ գործարանային փոշեներկմամբ:

Սանհանգույցում նախատեսված է ցնցուղարան, որը պետք է պատրաստվի տեղում մանր կտրատված խեցեսալերից:

Տեխնիկական նկուղում հարդարման աշխատանքներ նախատեսված չեն:

Արտաքին պատի վրա նախագծված է լինելու «Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն և Շին Շողիկ ճամբար» գրառմամբ լոգո: Այն նախատեսված է իրականացնել չժանգոտվող պողպատից:

Արտաքին պատուհանագոգերը բազալտյա են 100մմ հաստությամբ, պատերի վրայի թասակները, նաև կաթլաթափերը տանիքներում նախատեսված են մուգ մոխրագույն մետաղաթիթեղից, իսկ ներքին պատուհանագոգերը՝ բաց մոխրագույն պլաստիկից:

Տնտեսական սենքից դեպի տեխնիկական նկուղ թողնված է մտոց և նախատեսված է ձեռնասանդուղք, ևս մեկ ձեռնասանդուղք նախատեսված է արտաքին պատի վրա՝ տանիք բարձրանալու և ձյունը մաքրելու համար:

<u>Մուտքային հանգույցի ջրամատակարարում և կենցաղային կոյուղի</u>

Ջրամատակարարումն իրականացվում է գործող ջրագծից: Արտաքին ջրագիծը նախատեսված է պպոլիէթիլենային ՊՀԴ Т տիպի խողովակներից: Ջրմուղի ներքին ցանցը փակուղային է և մոնտաժվում է պոլիպորպիլենային խողովակներից:

Տաք ջրամատակարարումն իրականացվում է խոհանոցում տեղադրված ջրատաքացուցիչով: Ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային խողովակներից:

Մուտքային հանգույցի կենցաղային կոյուղի

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կոյուղու ներքին ցանցով հեռանալու են կոյուղու կուտակիչ հոր:

Ներքին ցանցը մոնտաժվում է կոյուղու պոլիվինիլքլորիդային PVC խողովակներից, որոնք իրար միանում են ռետինե սեղմիչ օղակներով(Մանրամասների համար տե՛ս 6, Ալբոմ 2):



Պատկեր3՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո մուտքային հանգույց

3.3. ՍՆԿԱՁԵՎ ՏԱՂԱՎԱՐ

Նախատեսված է կառուցել 8 հատ տաղավար, որոնք միմյանցից կտարբերվեն տանիքաձածկույթի և մետաղական կոնստրուկցիայի գույնով:

Նախագծված է մետաղյա կոնստրուկցիայով, տանիքի կոնստրուկցիան փայտյա է, իսկ ծածկույթը՝ հատիկավոր կղմինդր գունավոր մետաղաթիթեղից: Այն ըստ տաղավարների կլինի տարբեր գույնի: Նախատեսված է տաղավարներից 2-ի տանիքն իրականացնել դեղին գույնի RAL 1003, 2-ը՝ կապույտ RAL 5005, 2-ը՝ կարմիր RAL 3011, 2-ը՝ կանաչ RAL 6005: Նմանապես, ըստ տաղավարների, մետաղյա կոնստրուկիցան տարբեր գույն պետք է ներկվի(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 3):



Պատկեր4՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո սնկաձև տաղավարի տեսք

3.4. «ՊՈՂՊԱՏՅԱ ՇԱՏՐՎԱՆ»

«Պողպատյա շատրվան» դեկորատիվ կառուցվածքը նախատեսված է իրականացնել պողպատյա թերթից: Կորությունները պետք է կտրվեն լազերային հատիչով, անհրաժեշտության դեպքում կտրամադրվեն էլեկտրոնային վեկտորային ֆայլեր: Կտրված և կորացված թերթերը միմյանց ամրացվում են եռակցմամբ: Եռակցված կարանները պետք է մշակվեն այնպես, որ չերևան:

Կամարները նախատեսված են ներկել տարբեր գույների, իսկ գագաթներին նախատեսված են դեպի ներքև ուղղված ներկառուցված լուսարձակներ:

Ըստ կամարի բարձրության նախատեսված են 1,2 կամ 3-ական լուսարձակները(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 4):



Պատկեր5՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո պողպատյա շատրվանների տեսք

3.5. «Մարզահրապարակներ»

Նախատեսվում է կառուցել ֆուտբոլի մարզահրապարակ և թենիսի կորտ: Մարզահրապարակները նախատեսված են բացօթյա և ցանկապատված են լինելու: Ֆուտբոլի մարզահրապարակը նախագծված է 60x40մ չափով: Ծածկույթը նախատեսված է բնական գազոնից: Մարզադաշտի տակ նախատեսված է դրենաժային համակարգ, որը միացված է ընդհանուր ջրահեռացման կոլեկտորին:

Թենիսի կորտը նախագծված է 18x36մ չափով՝ HARD ծածկույթով: Ծածկույթը նախատեսված է երկու գույնի.դաշտը՝ մուգ կապույտ, եզրային գոտին՝ բաց կապույտ:

Ցանկապատը նախագծված է 3.5մ բարձրությամբ՝ ֆուտբոլի մարզահրապարակում և 5.0մ բարձրությամբ՝ թենիսի կորտում: Ցանկապատները նախագծված են պողպատյա կարկասից՝ 100x100x6մմ խողովակից՝ ցանկապատված ՊՎՔ պատվածքով ռաբիցա ցանցով՝ 70x70x3մմ բջիջներով՝ ֆուտբոլի մարզահրապարակում, և 40x40x3մմ բջիջներով՝ թենիսի կորտում(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 5):

Մարզահրապարակում նախատեսված է նաև էլ.լուսավորություն(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 7):



Պատկեր6՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո ֆուտբոլի մարզադաշտի տեսարան




Պատկեր7՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո թենիսի կորտի տեսարան

3.6. Ճարտարապետական փոքր ձևեր


Ճարտարապետական փոքր ձևեր են հանդիսանում նստարանները, բետոնյա ծաղկամանները և դեկորատիվ սալահատակները:

Նստարանները բաղկացած են գլաքարային շարվածքից, բետոնյա մասից, տրավերտինե բարձրակարգ սալից, փայտյա հատվածից՝ մշակված մթնոլորտապաշտպան յուղով:


Ծաղկամանները՝ 16 հատ, պատրաստվում են գունավոր ճարտարապետական բետոնից B25 դասի,Φ 10A500C 200x200մմ ամրանավորված ցանցի վրա(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 6):




Պատկեր8՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո նստարանի տեսք




Պատկեր 9՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո նստարանի տեսք



Պատկեր 10՝ Շին Շողիկ ճամբարի բերակարգումից և մասնակի վերակառուցումից հետո ծաղկամանների տեսք



Պատկեր 11՝ Շին Շողիկ ճամբարի բարեկարգումից և մասնակի վերակառուցումից հետո դեկորատիվ սալահատակ



Պատկեր 12՝ Պատկեր 11-ի բաղադրիչների նկարագրություն

3.7. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Ոռոգման ցանց

Կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումը իրականացվում է խորքային հորի[1] ջրով:

[1] Տեղադրված է ջրաչափ

Ոռոգման ցանցը փակուղային է և տեղադրվում է գետնի մակերևույթից 0.3մ խորության վրա, իսկ ճանապարհների հետ հատման տեղերում՝ 1.0մ խորությամբ: Պողպատե և պլաստմասե խողովակների միացումը իրականացվում է կցաշուրթերի միջոցով:

Ճանապարհները հատելիս խողովակներն անցնում են պողպատե պատյանների միջոցով:

Ոռոգման ցանցը իրականացվումէ պլաստմասե խողովակներով: Ոռոգման համակարգը ջրարբիացման սեզոնը վերջացնելուց հետո դատարկվում է կամ ցածրադիր մասերում տեղադրված ծորակներով ու ցայտիչներով կամ առանձին թողարկներով, որոնք տեղադրված են ցանցի ցածրադիր կետերում:

<u>Տարածքի լուսավորություն</u>

Տարածքի լուսավորության մալուխային ցանցը նախագծված է ԱԲԲԳ-1.0 մակնիշի ալյումինե մալուխներով: Վերջիններս տեղադրված են խրամուղիներում 0.8մ խորությամբ:

Տարածքի լուսավորության համար ընտրված են լուսադիոդային լուսատուներ:

Արտաքին լուսավորության վահանի սնուցումն իրականացվում է աղջիկների մասնաշենքի գլխավոր բաշխիչ վահանից ԲԲԳнг-1.0, 5x25ք.մմ մակնիշի մալուխով (վահանում տեղադրել ավտոմատ անջատիչ 80Ա):

Հաշվարկային լարումը 380/220Վ է, իսկ հաշվարկային հզորությունը՝ 19.1 կՎտ(մանրամասների համար տե՛ս Հավելված 6, Ալբոմ 7):

Ճամբարի տարածքով անցնում է «Պիոներական» 10կՎ ՕԳ-ի մի հատվածը՝ 156 մ երկարությամբ, և առկա է անվտանգության գոտիների խախտում 10կՎ լարման նկատմամբ, նախագծման փուլումձեռնարկողը ՀԷՑ ՓԲԸ-ից ձեռք է բերել տեխնիկական պայմաններ անվտանգության գոտիների վերականգնման համար, ինչն իրականացվելու է լիցենզավորված կազմակերպության կողմից գոյություն ունեցող 10կՎ ՕԳ-ն ստորգետնյա լարանցմամբ վերամոնտաժելու և նոր բաժանարար տեղադրելու աշխատանքների միջոցով(Տե՛ս Հավելված 4):

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Նախագիծը մշակվել է համաձայն ՊՈՒԷ-99 և СП31-110-2003 դրույթների: Ըստ էլսնուցման հուսալիության աստիճանի կենտրոնական մուտքի հոսանքաընդունիչները պատկանում են 3-րդ կարգի:

Աշխատանքային լուսավորությունը նախատեսված է բոլոր սենքերում:

Լուսատուների և վարդաների սնուցումը կիրականացվի 3 հաղորդալարերով, ներառյալ PE հաղորդալարը:

Վահանակը կտեղադրվի հատակից 1.5 մ բարձրության վրա, անջատիչերը և վարդակները 0.8մ բարձրության վրա, տնտեսական սենքում վարդակները տեղադրել հատակից 1.1 մ բարձրության վրա:

Բոլոր էլսարքավորումների մետաղական իրանները անհրաժեշտ է միացնել ցանցի զրոյական լարին և հողանցել PE լարի միջոցով:

Կենտրոնական մուտքի սնումն իրականացվում է տրանսֆորմատորային ենթակայանի ցածր լարման վահանից:

Օդային ցանցը նախատեսված է տեղադրել գոյություն ունեցող լուսավորության սյուների վրա:

0.4կՎ մալուխային ցանցը նախագծված է АВВГ-1.0 մակնիշի ալյումինե մալուխով:

3.8. Շին Շողիկ ճամբարի բարեկարգման և մասնակի վերակառուցման մասով աշխատանքների ծավալ և նյութական ռեսուրսներ

Արտաքին ջրագծի շինմոնտաժային աշխ. ծավալներ			
No.	Անվանում	Չափման միավոր	Քանակ
1	Գրունտի քանդում խրամուղում՝ կողմիցքով	$մ^3$	16
2	Նույնը ձեռքով	$մ^3$	2

3	Խրամուղու ետլիցք ձեռքով, տեղական ավազային գրունտով, բուլդոզերով, աստիճանական տոփանմամբ	$մ^3$	2.1
4	Խրամուղու ետլիցք ձեռքով, տեղական ավազային գրունտով, բուլդոզերով, աստիճանական տոփանմամբ	$մ^3$	15
5	Ավելորդ հողի բարձում և տեղփոխում	$մ^3$	0.9
6	Ավազի նախապատրաստական շերտ խողովակի տակ h=10սմ	$մ^3$	0.9
7	Պոլիէթիլենային ճնշումային ՊՆԴՏ տիպի խողովակներ ՊՆԴ25 Т«խմելու» ГОСТ 18599-83 P=1.0MPa	գծմ	10
8	Վենտիլ բրոնզե ∅20մմ	հատ	1
9	Միացում գոյություն ունեցող ջրագծին 50x20	հատ	1
10	Խողովակների քլորացում և փորձարկում	գծմ	10

Ներքին ջրամատակարարման ծավալներ			
No	Անվանում	Չափման միավոր	Քանակ
1	Ջրամատակարարման պոլիպրոպիլենային ճնշումային խողովակ ջերմամեկուսացմամբ ∅ 20x 2.8 (d=15) PN16	գծմ	12
2	Ջրամատակարարման պոլիպրոպիլենային ճնշումային խողովակ ջերմամեկուսացմամբ ∅ 25x 3.5(d=20) PN16	գծմ	8
3	Վենտիլ բրոնզե ∅ 20մմ	հատ	2
4	Անկյունային վենտիլ ∅ 15մմ	հատ	5

5	Լվացարանի ծորակ խառնիչ	հատ	1
6	Ցնցուղի ծորակ խառնիչ	հատ	1
7	Խոհանոցային կոնքի ծորակ խառնիչ	հատ	1
8	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր ∅ 15-∅20	հատ	16
9	Համակարգի լվացում և փորձարկում	գծմ	20

Արտաքին կոյուղու շինմոնտաժային աշխ.ծավալներ			
No	Անվանումը	Չափման միավոր	Քանակ
1	Գրունտի քանդում խրամուղում էքսկավատորով, կողլիցքով	$մ^3$	156
2	Նույնը ձեռքով	$մ^3$	26
3	Խրամուղու ետլիցք ձեռքով, տեղական ավազային գրունտով, աստիճանական տոփանմամբ	$մ^3$	19
4	Խրամուղու ետլիցք ձեռքով, տեղական ավազային գրունտով, բուլդոզերով, աստիճանական տոփանմամբ	$մ^3$	149
5	Ավելորդ հողի բարձում և տեղափոխում	$մ^3$	14
6	Ավազի նախապատրաստական շերտ խող. տակ h=10սմ	$մ^3$	6
7	Կոյուղու PVC խողովակներ ռետինե սեղմիչ օղակներով ∅160	գծմ	69
8	Կոյուղու կլոր հոր երկաթբետոնե d=1.0մ	հատ/$մ^3$	3 /4.5
9	Պողպատե միացնող էլեկեմնտներ հորերում (սեյսմիկա 9բալ)	կգ	110
10	Մետաղական աստիճաններ հորերում	կգ	29

11	Թուջե մտոց ∅ 700մմ “T” տիպի	հատ	3

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ			
No	Անվանում	Չափման միավոր	Քանակ
1	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Φ 50մմ	գծմ	6
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Φ 50մմ	գծմ	12
3	Լվացարան սիֆոնով	հատ	1
4	Զուգարանային կոնք	հատ	1
5	Խոհանոցային կոնք 2 բաժանմունքով	հատ	1
6	Հոսակ ∅ 50մմ	հատ	1
7	Ցնցուղի տակդիր	հատ	1
8	Պոլիվինիլքլորիդային խողովակի ձևավոր մասեր ∅50	հատ	15
9	Պոլիվինիլքլորիդային խողովակի ձևավոր մասեր ∅100	հատ	8
10	Խրամուղու մշակում և ետլիցք	$մ^3$	4
11	Համակարգի փորձարկում	գծմ	18

ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ ԷԼՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ			
No.	Անվանում	Միավոր	Քանակ
1	Լուսատու պատի 1 լուսադիոդային լամպով	հատ	1

	Հերմետիկ 12Վտ		
2	Լուսատու առաստաղի, լուսադիոդային լամպով		
	36Վտ IP65	//	4
3	Նույնը, լուսադիոդային լամպով 36Վտ, հերմետիկ	//	4
	IP54		
4	Նույնը, լուսադիոդային լամպով 6Վտ, հերմետիկ		
	(սանհանգույց)	//	3
5	Նույնը, լուսադիոդային լամպով 6Վտ, հերմետիկ		
	(հայելու լոսավոր.)	//	1
6	Լուսատու պատի 1 լուսադիոդային լամպով 15Վտ		
	(խոհանոց)	//	1
7	Լուսարձակ 1 լուսադիոդային լամպով 18Վտ IP 54		
	(տեղադրել արտաքին պատի վրա 0.5մ բարձրությամբ, կանգնակի օգնությամբ)	//	4
8	Կանգնակ 0.5 մ բարձրությամբ	//	4
9	Լուսատու պատի 1 լուսադիոդային լամպով 12Վտ IP 54	//	8
10	Անջատիչ 250Վ, 6Ա, մեկ ստեղով	//	1
11	Նույնը երկու ստեղներով	//	5
12	Վարդակ 2 բևեռանի հողանցվող կոնտակտով , 250Վ, 16Ա	//	3
13	Վարդակ 2 բևեռանի հողանցվող կոնտակտով , 250Վ, 16Ա, երկկցված	//	5

14	Տուփ վարդակների և անջատիչների համար	//	19
15	Տուփի ճյուղավորիչ	//	25
16	Մուտքային արկղ 3 ապահովիչներով 100 Ա և 1 եռաբևեռ անջատիչ 100 Ա	հատ	1
17	Վահանակ 24 մոդուլի համար բաղկցած՝ 1. Անջատիչ ներանցման 3 բևեռանի 50 Ա 2. Նույնը, գծային 1 բևեռանի 25 Ա 3. Նույնը գծային 1 բևեռանի 32Ա	// //— //— //—	1 1 5 3
18	Հաշվիչ էլեկտրոնային 2 տարիֆանի 380Վ, 50 Ա	//—	1
19	Մալուծ պղնձե 3x2.5 ք.մմ կտրվածքով, չհրկիզվող	մ	280
20	Նույնը 3 x 4ք.մմ կտրվածքով, չհրկիզվող	//—	40
21	Նույնը 5 x 16ք.մմ կտրվածքով, չհրկիզվող	//—	2
22	Խողովակ 20մմ տրամագծով	//—	320
23	Խողովակ 40մմ տրամագծով	//—	2

24	Պատրաստել խրամուղի 0.8x0.3x5մ չափերով ՝ հողանցման համար	մ/կբմ	50/12
25	Պողպատ անկյունային 50x50x5մմ՝ հողանցման էլեկտրոդների համար	մ	25
26	Պողպատ անկյունային 50x50x5մմ՝ հողանցման շինաների համար	//— —	50
27	Էլեկտրոդները խփել գրունտի մեջ՝ լ=2.5մ	հատ	10

ՑԱԾՐ ԼԱՐՄԱՆ 0.4ԿՎ ՕԴԱՅԻՆ ԳԻԾ			
No.	Անվանումը	Միավոր	Քանակ
1	Մալուխ ուժային ալյումինե 1.0կՎ 4x35ք.մմ կտրվածքով	մ	500
2	Ծայրային կցորդիչ, ջերմակցվող 1.0կՎ 35ք.մմ կտրվածքի համար	հատ	2
3	Մալուխային ծայրապնակ 35ք,մմ կտրվածքի համար	//— —	8
4	Կցորդիչ, ջերմակցվող 1.0կՎ 35ք.մմ կտրվածքի համար	//— —	2
5	Հենսյուն մետաղական H=9.0մ	//— —	3
6	Պատրաստել փոս 0.5x0.5x0.8մ չափերով հենարանների համար	Հատ/կբմ	3/0.6
7	Բետոն հենարանների համար	կբմ	0.6

ՏԱՐԱԾՔԻ (ԳԱԶՈՆԻ) ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ			
No.	Անվանում	Միավոր	Քանակ
1	Լուսատու արտաքին լուսավորության լուսադիոդային լամպով 15Վտ	հատ	9
2	Հենսյուն մետաղական H=1.0մ	//— —	9
3	Ծայրոց գրունտի	//— —	9
4	Մալուխ ալյումինե 3x4ք.մմ կտրվածքով	մ	80
5	Հողովակ PVC ∅ 20մմ	//— —	80
6	Պատրաստել խրամուղի 1 մալուխի համար 0.5մ խորությամբ 0.3 լայնությամբ	մ/կբմ	80/12
7	Գրունտի ետլիցք	կբմ	12

ՇԱՆԹԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ			
No.			
1	Շանթապաշտպանիչ ցանց կլոր ցինկապատ պողպատ ∅ 8մմ	մ	90
2	Պողպատ անկյունային (հողակցիչ), 50x50x5մմ չափերով	//— —	10

3	Խփել հողակցիչները գրունտի մեջ l=2.5մ	հատ	4
4	Պողպատ շերտավոր ցինկապատ 40x4մմ չափերով	մ	24
5	Պատրաստել խրամուղի 0.8x0x2x12մ չափերով՝ գրունտի մեջ	մ/կբմ	12/1.9

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Որևէ այլընտրանք չի նախատեսվում: Իսկ զրոյական տարբերակի դիտարկումը նշանակում է վերոնշյալ աշխատանքների չկատարում,ինչն էլ իր հերթին կհանգեցնի համայնքի սոցիալտնտեսական աճի նվազմանը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴԹՎՈՒՄ՝ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

5.1.Ծրագրի տարածքում գոյություն ունեցող իրավիճակ

Շին Շողիկ ճամբարը գործում է 1990-ական թվականներից, նախկինում այլ անվանմամբ: Ճամբարի տարածքը ցանկապատով առանձնացված է և կան քաղաշինական օբյեկտներ, այսինքն՝ ամբողջ տարածքն արդեն իսկ ենթարկված է անթրոպոգեն ազդեցության, որի հետևանքով նախատեսվող բարեկարգման և մասնակի վերակառուցման աշխատանքները հատկապես ֆլորայի և ֆունայի վրա նոր ազդեցություն չեն ունենալու:

Ստորև ներկայացվում է գործունեության համար նախատեսված տարածքի կոորդինատային տվյալները՝ WGS (ARMREF 02)ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով՝

№	Գեոդեզիական կոորդինատներ WGS (ARMREF 02)	
	X	Y
1	8466252.0810	4496824.1346
2	8466122.2632	4496895.3466

3	8466122.9292	4496899.2576
4	8466117.5161	4496918.9439
5	8466157.9866	4496979.2508
6	8466316.1247	4497184.6569
7	8466331.4656	4497203.9621
8	8466337.6870	4497211.7913
9	8466387.3507	4497194.2607
10	8466409.4004	4497186.3621
11	8466489.7522	4497157.5546
12	8466480.5000	4497148.8614
13	8466385.7858	4497048.2019
14	8466367.2905	4497016.1015
15	8466352.8843	4497000.3202
16	8466346.4422	4496993.1513
17	8466310.7448	4496953.4265
18	8466272.1492	4496896.8057
19	8466261.0681	4496866.5512
20	8466266.9162	4496863.7422
21	8466267.2202	4496855.7581
22	8466252.0810	4496824.1346

Աղյուսակ 1: Տարածքի WGS գեոդեզիական համակարգով կոորդինատներ

Ճամբարը գտնվում է անտառապատ լեռան լանջին և լեռան թեքությունից գրեթե միշտ ջրի հոսք (անձրևաջուր, ձնհալ) կա դեպի ճամբարի տարածք, որպեսզի ճամբարի տարածքը չհեղեղվի և ջրի կուտակումներ, ջրի նեխում չլինի և վնասակար միջատներ չառաջանան և առողջության համար վտանգավոր միջավայր չձևավորվի, ինչպես նաև մակերեսին մոտ գրունտային ջրերի պատճառով կառույցների հիմքերը

ջթուլանան, իրականացվում է այդ ջրերի դրենաժ, որից հետո այդ դրենաժային ջրերը խողովակների միջոցով կազմակերպված ուղղորդվում են դեպի գոյություն ունեցող ընդհանուր ջրահեռացման համակարգ՝ Փ 500 տրամագծով կոլեկտր: Այսպիսով, դրենաժի իրականացումը կարևոր է՝

1. Ստեղծելու մարդու առողջության համար անվտանգ միջավայր
2. Ապահովելու համար շենքերի հիմքերի սեյսմակայունությունը

Ճամբարի գործունեության համար խմելու-կենցաղային ջրամատակարարում և կոյուղաջրի հեռացում

Ճամբարի խմելու-կենցաղային ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա ջրային ռեսուրսների միջոցով, ըստ Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն Հայաստանի Մասնաճյուղին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մեկ գործող խորքային հորի շահագործման համար տրամադրված N 0181-21 ջրօգտագործման թույլտվության (Տե՛ս Հավելված 5): Ջրօգտագործման նպատակը խմելու-կենցաղային է: Խորքային հորի մոտ տեղադրված է ջրաչափ: Բացի այդ, Ձեռնարկողի կողմից եռամսյակային կտրվածքով ՀՀ ՊԵԿ է ներկայացվում «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների» միասնական հարկային հաշվարկը, իսկ տարեկան կտրվածքով ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին է ներկայացվում «Ջրօգտագործման մասին ձև N 2-ՏԱ» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունը: Ձեռնարկողը կանոնավոր կերպով խորքային հորի ջրից նմուշները լաբորատոր փորձաքննության է ներկայացնում՝ ջրի որակը պարզելու համար: Ջրի պղտորության և ավազի հատիկների առկայության դեպքում ջուրը միայն տնտեսական նպատակներով է կիրառվում, իսկ խմելու և ճաշարանի համար ջուրը ձեռք է բերվում տեղական վաճառակետերից՝ տարբեր տարողունակության տարաներով: Միայն ջրի թափանցիկության վիզուալ զննումից հետո ջրի նմուշառման և կրկնակի լաբորատոր փորձաքննության դրական պատասխանից հետո է ջուրը կրկին կիրառվում խմելու նպատակով:

Ճամբարի բոլոր քաղաքաշինական օբյեկտներից կոյուղաջրերի հեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպասարկվող կոյուղատար համակարգի միջոցով՝ Հանքավան-Հրազդան կոյուղու կոլեկտոր, որի համար առկա է կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի N 0181-21 թույլտվություն՝ տրամադրված 20.05.2021թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Ըստ ճամբարի բարեկարգման և մասնակի վերակառուցման 3-րդ փուլի, միայն մուտքային հանգույցի համար կկառուցվի կոյուղու սեպտիկ հոր: Անհրաժեշտ է նշել, որ մուտքային հանգույցը շահագործվելու է 1 աշխատողի կողմից:

<u>Հողի էրոզիա</u>

Ճամբարի ամբողջ տարածքը հարթ է: Հարավ-արևելյան կողմից հարակից է լեռան թեք լանջին, որտեղից սեզոնային ձնհալքից ջրահոսքը հոսում է դեպի ճամբարի տարածք, որի կանխարգելման համար գրունտային դրենաժ է փորվել 8-15սմմ խորությամբ, և լանջից հոսող ձնհալքի ջուրն ուղղորդվում է դեպի ընդհանուր ջրահեռացման կոլեկտոր:

Ճամբարի տարածքում և լանջից հոսող ձնհալքից հողի էրոզիա չի նկատվում, որովհետև ինչպես նշված ճամբարի տարածքն հարթ է, իսկ թեք լանջը ծածկված է բուսականությամբ, որոնց արմատները կանխում է էրոզիան:

Ճամբարի դիմացով հոսում է Մարմարիկ գետը, որի ափը հարակից տարածքի մակերևույթից մոտ 1-15մ ներքև է գտնվում: Ճամբարի հարևանությամբ գետափի երկայնքով տեղ-տեղ կառուցվել են բետոնե հենապատեր, առկա է առատ և խիտ բուսականություն, ուռիներ. Ինչպես հայտնի է ուռիների արմատները բավականին խորն են ներթափանցում գրունտի մեջ, ինչը ամրացնում է հողը և կանխարգելում է հողատարումը:

<u>Աղբահանություն</u>

Ճամբարի գործունեությանը սեզոնային է, հետևաբար ամեն տարի կնքվում է աղբահանության պայմանագրի Ծաղկաձորիհամայնքապետարանի հետ:

Ստորև ներկայացվում է տեղանք այցելության նկարները















Բարեկարգման և մասնակի վերակառուցման ենթակա քաղաքաշինական օբյեկտներ, մոտեցման ճանապարհներ









Ճամբարի հարակից տարածքներից առանձնացնող ցանկապատ և մուտքային հանգույց



10կՎ օդային գիծ

	
10Կվ ՕԳ և ջրամբար	Խորքային հորի մոտ տեղադրված ջրաչափ
	
Ծրագրի շրջանակում վերականգնման ենթակա կամուրջ և համայնքային ճանապարհ դեպի ճամբար ուղղորդող	
	

Գրունտային դրենաժ և խիտ բուսականություն (որպես ջրից հողի էրոզիա կանխարգելում)





Մարմարիկ գետ և վարարումներից շրջակա տարածքի հեղեղման կանխարգելման միջոցներ (բուսածածկ, հենապատեր, գետահունի բավականին իջվածք հարակից միջավայրի նկատմամբ)





Տամկախոտ (մոլախոտի տեսակ է)

Փսխածաղիկ (грыжник)

	
Ռամոնդա	***Սողացող սեզ***
	
Վայրի փանձենի	***Վայրի խնձորենի***

	
Սոճի	***Լորենի***

5.2. ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Փյունիկ գյուղում, Մարմարիկ գետի միջին հոսանքի հարևանությամբ, դեպի հարավ-արևմուտք աննշան բարձրացող ռելիեֆով: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1871-1875 մետրի սահմաններում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի և Ծաղկունյաց երկու խոշոր գեոտեխնիկական բլոկների միջակայքում:Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են էոցենի

հրաբխածին-նստվածքային և ինտրուզիվ ապարները, որոնք ներկայացված են տուֆոբրեկչիաներով, տուֆոավազաքարերով, գրանիտոիտներ: Նշված ապարները լեռնալանջերում և գետահովիտներում ծածկված են էլյուվիալ-դելյուվիալ և ալյուվիալ-պրոլուվիալ փուխր բերկորային աբազակավային կազմի առաջացումներով:

Տարածքի հողաբուսական ծածկը 0.0-0.8մ է:

Ֆիզիկաերկրաբանական տեսակետից նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները՝ սողանքներ, կարստ, փլուզումներ:

Ճամբարը կառուցվել է խորհրդային միության տարիներին, տարածքը առանձնացված է շրջակա միջավայրից ցանկապատով և արդեն իսկ ենթարկված է անթրոպոգեն ազդեցության, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ բարեկարգման և վերակառուցման աշխատանքների արդյունքում որևէ նոր բացասական ազդեցության շրջակա միջավայրին՝ այդ թվում ֆլորա, ֆաունա, չի իրականացվի: Բարեկարգման և վերակառուցման գործունեությունը հիմնականում սահմանափակվում է ճամբարի տարածքում, իսկ դեպի տարածք մոտեցնող ճանապարհը, որն անցնում է Մարմարիկ գետի վրայի կամրջով, բարվոք վիճակում չեն գտնվում, կամրջի և ճամբար տանող ճանապարհի վերակառուցման արդյունքում նույնպես նոր տարածքներ ազդեցության չեն ենթարկվելու

Համայնքային նշանակության ճանապարհը ճամբարից գտնվում է մոտ 0.5կմ հեռավորության վրա: Առկա են տարածքին երեք կողմից կից հողամասեր:

<u>Սեյսմակայունություն</u>

Տեղանքը ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում է որպես 3-րդ գոտի, A=0.4g՝ ըստ ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»: Գրունտները հանդիսանում են 3-րդ կարգի, քամու նորմատիվ ազդեցությունը 38.0 կգ/մ^2, ձյան նորմատիվ բեռնվածքը՝ 200.0 կգ/մ^2: Սեյսմիկ հաշվարկներն իրականացված են «LIRA-SAPR 2017»հաշվարկային ծրագրով:

Տարածքը հիմնականում հարթ է, դեպի հարավ արևմուտք թույլ ռելիեֆով, որը վերջնամասում սաստկանում է վերածվելով անտառի:

5.3. ԿԼԻՄԱ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Շրջանի կլիման լեռնային է, ուղղահայաց գոտիականության ազդեցության տակ: Ձմեռը ցուրտ է, երկարատև և ձնառատ, ամառը մեղմ է, գարունը՝ երկարատև և անձրևոտ: Շրջանի կլիմայական բնութագրերը բերված են ստորև աղյուսակներում, ըստ Կլիմայական տարրերի արժեքները վերցված են «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» աղբյուրից https://www.arlis.am/hy/acts/195026:

Շրջանում բացարձակ նվազագույ ջերմաստիճանը հասնում է մինչև -31.5^{0}C աստիճան, իսկ բացարձակ առավելագույն ջերմաստիճանը երբեք չի բարձրանում 35 աստիճանից: Տարվա միջին ջերմաստիճանը կազմում է 5.6^{0}C աստիճան ըստ ցելսիուսի սանդղակի: Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72% է, իսկ տեղումների տարեկան քանակը՝ 689մմ է: Ձյան ծածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը 132սմ է: Քամու միջին տարեկան արագությունը 2.1մ/վ^2 է:

Ստորև բերված աղյուսակներում ամփոփված է համապատասխան տեղեկատվությունը քամու, օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, մթնոլորտային տեղումների, ձնածածկույթի, քամու վերաբերյալ:

[2]Հաշվարկվել է ըստ Աղյուսակ 6-ում՝ «Քամի (արդիականացման ենթակա)» նշված քամու եռամսյակային միջին արագությունների միջինի:

Աղյուսակ 2: Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, 0C														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0

Աղյուսակ 3:Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ.ա./մ.ն.	**Ըստ ամիսների^{0}C**											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	13	14
Հրազդան	մ.ա.	-2.8	-1.0	3.5	10.9	16.8	20.9	24.0	24.7	21.5	14.6	6.8	-0.1
	մ.ն.	-12.0	-10.5	-6.0	0.4	4.9	8.1	11.7	11.5	7.4	2.0	-3.0	-8.6

Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը %															
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին մմ
	Ըստ ամսիների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթ			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Հրազդան	132	129	310	92

Աղյուսակ 7: Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը,%								Անդորրի կրկնելիությունը %	Միջին ամսական առավելություն, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին առավելություններից գերազանցող ուղղությունների միջին արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին առավելություններից գերազանցող ուղղությունների միջին արագությունը, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27		Արլ		Արմ	

		2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7		1.9		2.9		2.4
	ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1				
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0						
	հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8				
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2						
	հոկտեմ-բեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7				
		2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0						

5.4. Մթնոլորտային օդ

Փյունիկ գյուղում չեն կատարվում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ, հետևաբար որպես տվյալներ վկայակոչվում են գյուղին հարակից Ծաղկաձոր և Հրազդան քաղաքներում կատարված փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումները: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնն է իրականացնում մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ: Ստորև ներկայացվում է Ծաղկաձոր և Հրազդան քաղաքներում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների տվյալները՝ վերցված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիաներ (ֆոն), մգ/մ³
Հրազդան	Ազոտի երկօքսիդ	0.011
	Ծծմբի երկօքսիդ	0.011
	Փոշի	0.141
Ծաղկաձոր	Ազոտի երկօքսիդ	0.009
	Ծծմբի երկօքսիդ	0.008
	Փոշի	0.054

Աղյուսակ 8 ՀՀ որոշ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ (հնգամյա միջին)[3]

[3] Տեղեկատվության աղբյուր http://meteomonitoring.am/page/1591

5.5. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ և ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող քիմիական, ֆիզիկական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում հանգեցնում է ջրի աղտոտման: Ջրի աղտոտման աղբյուրները կարող են լինել՝

- Կետային, որոնցից են կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերը
- Ցրված՝ գյուղատնտեսական արտահոսքերը:

Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթեիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքրման հատկությունը. փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

Ճամբարի տարածքի ջրագրական ցանցը ներկայացված է Մարմարիկ գետով և իր վտակներով, որից ամենախոշորը Գոմուռ վտակն է՝ 15 կմ երկարությամբ: Գոմուռ գետը սկիզբ է առնում Փամբակի լեռների հարավային լանջերից և Մեղրաձոր գյուղից ներքև ձախից միախառնվում է Մարմարիկին:

Մարմարիկ գետը Հրազդան գետի ամենախոշոր աջակողմյան վտակն է, 37 կմ երկարությամբ, ջրհավաք ավազանը՝ 427կմ^2, հոսքը ձևավորվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաներից հոսող գետակների ջրերով:

Ստորին հոսանքում գետը ջրանցքավորված է, ափերն ամրացված են բետոնե պատերով:

Մարմարիկ գետի սնուցումը խառն է՝ հալոցքային, անձրևային և ստոգետնյա ջրերով, հիմնականում հալոցքային ջրերի հաշվին (տարեկան հոսքի 60-70%); Անձրևային սնումը կազմում է տարեկան հոսքից 10-15%:

2024թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիականն ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ(առկայության դեպքում), ջրի ելքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով ստացվում են տվյալներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթրինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի 5 դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Հրազդանի ՋԿԸ-ն ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

<u>Ստորերկրյա քաղցրահամ ջրեր</u>

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգն իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանող հորատանցք, 35 չշատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել է 55 դիտակետերում՝ որոնցից յուրաքանչյուրում որոշվել է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, աղային ռեժիմի տարրեր, մետաղներ):

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ մինչև միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները որոշ դիտակետերի համար ներկայացվում են ստորև աղյուսակում:

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր.մ³/վ								
		հոկտեմբեր			**նոյեմբեր**			**դեկտեմբեր**		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.67	3.33	80	2.20	3.44	64	1.99	3.10	64
Հրազդան	Արգել	2.30	3.73	62	2.36	3.69	64	2.15	3.13	69
Մարմարիկ	Հանքավան	0.54	0.48	113	0.49	0.51	96	0.50	0.45	111
Մարմարիկ	Աղավնաձոր	1.67	1.48	113	1.38	1.50	92	1.25	1.33	94
Քասախ	Վարդենիս	0.39	0.53	74	0.53	0.55	96	0.41	0.50	82
Քասախ	Աշտարակ	3.46	2.75	126	3.76	2.93	128	2.10	2.66	79

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ ջրի որակը Ապարան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև հատվածում՝ հոկտեմբերին «անբարար» (4-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև՝ հոկտեմբերին «միջակ» (3-րդ դաս):


Գեղարոտ գետի ջրի որակը Գեղարոտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անվարար» (ձ-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Քաղս գյուղից ներքև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), ԱՐգել գյուղից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի, Գեանիստ գյուղի և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում՝ հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոտկեմբերին՝ «վատ» (5-րդ դաս)



Գծապատկեր1՝ Քասախ գետում ամոնիում իոնի կենցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր2՝ Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր3՝ Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորգետնյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական հատկանիշների մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Հրազդան ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածի Դաշտավանի N1526, Սիսի N 1535, N 1536, 2003 և Ջրահովիտի N 2007 դիտակետերի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերը և մակրդակները, աննշան տատանումներով, կայուն են: ծախսի և մակարդակի ավելացումներ են նկատվել Հովտաշենի N2008 և N2053 և Մասիսի քաղաքի N1519 դիտակետերի շատրվանող հորատանցքերում:


Արարատի մարզի Հայանիստի N2005 հորատանցքում, ինչպես նաև Արմավիրի մարզի Գրիբոյեդով N 2026, Արագած N 2085 և Աղավնատուն N 2087 գյուղերի հորատանցքերում ջրի մակարդակը բարձրացել է 0.20մ-ի սահմաններում: Սիս N78, Դողզ N2086, Լեռնամերձ N2088 և Կարբի N 2089 գյուղերի հորատանցքերում դիտվել է մակարդակի կայուն վիճակ: Ջրահովիտի N 2004 և Փարպիի N2119 հորատանցքերում ջրի մակարդակն իջել է 0.30-0.40մ համապատասխանաբար:

Նիգավան բնակավայրի ջրհորներում N2010 և N2011 նկատվել է ջրի մակարդակի իջեցում, իսկ գյուղ Խորոնքի N2023 ջրհորում ջրի մակարդակի աննշան բարձրացել է:


Ծախսի կայուն վիճակ նկատվել է գյուղ Ղազարավանի N 755 և գյուղ Բուժականի N2105 աղբյուրներում: Ապարան քաղաքի N 2051, N2107, ինչպես նաև Բջնի N246, Սոլակ N1297, N1832, Կարբի N1636 և Բյուրական N2108 բնակավայրերի աղբյուրներում ծախսը նվազել է: Երևան քաղաքի N970 դիտակետի ջրի ծախսն ավելացել է շուրջ 0.7լ/վրկ-ով:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում:


Մասիս քաղաքի N 1519 շատրվանող հորատանցքերում ջրի հանքայնացումը, ինչպես նաև նիտրատ և ֆոսֆատ իոնների ցուցանիշները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները: Հովտաշեն գյուղի N2053 շատրվանող հորատանցքում գերազանցվել են հանքայնացումը և նիտրատ իոնի պարունակությունը: Ջրահովիտ N2007 գյուղի շատրվանող հորատանցքում՝ հանքայնացումը և սուլֆատ իոնի պարունակությունը գերազանցել են համապատսխան ՍԹԿ-ները:




Գծապատկեր4՝ Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր5՝ Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր6՝ Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակի փոփոխությունները







Գծապատկեր7՝ Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր8՝ Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր9՝ Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը



Գծապատկեր10՝ Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը



Գծապատկեր11՝ Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում սուլֆատ իոնի պարունակությունը

Բազմամյա ելքի հիմնական հիդրոլոգիական բնութագիրը

Գետ-դիտակետ	Բազմամյա միջին տարեկան ելքը մ3/վրկ	Հոսքի ծավալը մլն.մ^3	Բացարձակ առավելագույն ելքը մ3/վրկ	Բացարձակ նվազագույն ելքը մ^3/վրկ	Միջին ելքը 95% ապահովվածության տարվա համար, մ^3/վրկ
գ. Մարմարիկ դ. Աղավնաձոր	5.09	160	86.7	0.14	3.12

Մարմարիկ գետի միջին տարեկան բազմամյա ելքի բաշխումը տարվա կտրվածքով

Տարեկան բազմամյա ելքը, մ^3/վրկ		I	II	III	IV	V	VI	VI	VIII	IX	X	XI	XII
գ. Մարմարիկ	Միջին	1.21	1.26	2.19	12.1	22.1	10.9	3.85	1.77	1.34	1.49	1.49	1.34
	Առավելագույն	2.05	2.41	5.19	20.5	52.5	23.9	10.2	6.10	2.27	7.74	2.51	3.24
	նվազագույն	0.50	0.46	0.78	2.79	3.64	0.47	0.48	0.45	0.53	0.53	0.49	0.60

Մարմարիկ գետի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով՝ Փյունիկի և այլ գյուղական համայնքների կողմից:

6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ

6.1. Հողաբուսական ծածկույթ և ֆլորա

Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Շաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը:
Ճամբարի տարածքին բնորոշ են լեռնաանտառային գործ և դարչնագույն հողերը:

Բուն գործունեության վայրում հողային ֆոնդը, ֆլորան ենթարկված են անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ նախկինում և այժմ տարածքը ճամբարային-հանգստի գոտի է:

Մարզն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, որը պատկանում է Ապարանի ֆլորիստիկ շրջանին:

Տարածաշրջանում տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:


Տափաստանային գոտու բուսականությունը մեր Հանրապետությունում տարածված է 1400-2400մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքներ են:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, կերային բանջարանոցային բուսատեսակներ և այլն:



Պատկեր13՝ Հողային տիպեր



Պատկեր14՝ Լանդշաֆտային գոտիներ

Հրազդանի և հարակից տարածքների անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորառէջը (Quercus macranthera), բոխի (Carpinus betulus), բոխու տեսակները (Aser campestre, Aser trautvetteri), արոսենի (Sorbus umbelata) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (Pyrus sp., P. Georgica,

P. communis)և խնձորենի (Malus silvestres): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված է յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն:

Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թծկու, կաղնու, արոսենու անտառները: Տարածաշրջանի բուսականություն հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ (Dactylis Woronovii), սեզ տափաստանային (Phleum phleoides), դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa), կելերիա սանրաձև (Koeleris cristata), ցորնուկ ցցամազ (Bromus squarrosus), շյուղախոտ ակոսավոր (Festuca sulcata), մերձալպյան բարձրախոտերից՝ իշառվույտ նեապոլիտական (Melilotus neapolitanus), եղինջ երկտուն (Urtica diooca), ծվծվուկ կտրտված (Silene multifida) և այլն:

Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոնք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Ճավշիր պարսկական (Opopanax persicus Boiss), Ճարտարուկ Արարատի (Draba araratica Rupr), ճարտարուկ խոզնավոր (Draba hispida Wildd), Էվնոմիա կլորատերև (Eunomia rotundifolia C.A.Mey.), Ջրահարս փոքր (Najas minor), Աղածաղիկ Կուլպական (Halanthium kulpianum (K. Koch Bunge)), Երնջակա Վանատուրի (Eryngium wanaturii Woronow), Ոզնաթուփ վարսակային (Acantholimon avenaceum), Տերեփուկ Թախտաջյանի (Centaurea Takhtajanii) և այլն:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթական և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից ՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված բուսատեսակները, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

6.2. ՖԱՈՒՆԱ

Ֆաունայի (կենդանական աշխարհի) տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գակլ, աղվես, լուսան, նապատստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներինց է հայկական

լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրահավ, տափաստանային արծիվ այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը:

Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Ճամբարի տարածքում բույսեր կամ կենդանիներ, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում բացակայում են:

Տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլ, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշարավոր կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ: Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ Խխունջը (Gyraulus laevis):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Մորեք հայկականը (Gomphocerus armeniacu),Հաստածղրիդ լայնացած (Bradyporus dilatatus),սևամարմին(Cylindronotus erivanus), ապոլոն (Parnassius Apollo kashtshenkoi Sheljuzhko), Աֆրիկյան փրոթերեբիա (Proterebia afra hyrcana), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (Eupithecia alexandriana Wardikian), Ռավազինի մրջյուն (Myrmica ravasinii Finzi), Հայկական իժ (Vipera Montivipera): Թռչուններից՝ գառնանգղ (Gypaetus barbatus Kinnaeus), Գիշանգղ (Neophron percnopterus Linnaeus), Օձակեր արծիվ (Circaetus gallicus), Տափաստանային արծիվ (Aquila nipalensis orientalis Hodgson), Կարմրաոտ բազե (Falco vespertinus Linnaeus), Բվեճ (Bubo bub) և այլն: Երկկենցաղներից Կանաչ դոդոշը (Bufo viridis), սովորական ծառագորտը (Hyla arorea schelkpwnikowi), , Լճագորտը (Pelophylax ridibundus) և փոքրասիական գորտը (Rana macrocnemis), կաթնասուններից՝ Գորշ արջը (Ursus arctos Linnaeus):

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են էնդեմիկ կամ ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակներրը, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրավիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով: Տարածքը շրջապատված է անտառային զանգվածներով:

7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի տարածքին մոտ գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արևելյան ծայրամասում, 1.5կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակարդակից 1755մ բարձրության վրա գտնվում է «Հաղպրտանք» աղբյուր ջրաերկրաբանական հուշարձանը, ըստ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 14 օգոստոսի 2008թվականի N 967-Ն որոշման:

«Հաղպրտանք» աղբյուրի ջրաերկրաբանական հուշարձանը Ծրագրի բուն տարածքից գտնվում է 19 կմ հեռավորության վրա և չի կարող վնասվել, հատկապես այն դեպքում, երբ ոչ մի պայթեցման կամ ուժեղ թրթռում առաջացնող մեխանիզմ չի կիրառվելու և ծրագրի ազդեցությունը խիստ ժամանակավոր բնույթ է կրելու:

Ստորև բերվում է «Հաղպրտանք» աղբյուր ջրաերկրաբանական հուշարձանի հեռավորությունը ճամբարի տարածքից և տեղադիրքը՝



Պատկեր 15՝ Ջրաերկրաբանական հուշարձան "Հաղպրտանք" աղբյուրի հեռավորությունը ճամբարի տարածքից և տեղադիրքը

8. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանություն

Ծրագրի տարածքում՝ Փյունիկ գյուղ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան, ըստ ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003թվականի № 1793-Ն որոշման «Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկը հաստատելու մասին»:

Ոչ մի հուշարձան չի գտնվում ազդեցության գոտում և ոչ մի հուշարձան չի կարող վնասվել, հատկապես այն դեպքում, երբ ոչ մի պայթեցման կամ ուժեղ թրթռում առաջացնող մեխանիզմ չի կիրառվելու և ծրագրի ազդեցությունը խիստ ժամանակավոր բնույթ է կրելու:

Համենայն դեպս, եթե հողային աշխատանքների ընթացքում հայտնաբերվեն պատահական գտածոներ, ապա կկիրառվի հետևյալ ընթացակարգը[4]՝

- գտածոյի վայրում շինարարական աշխատանքների անհապաղ դադարեցում,
- ծանուցում պատասխանատու տեղական ինքնակառավարման մարմիններին և ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության» գործակալություն,

[4] ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի No. 438 որոշում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասի»

- պատահական գտածոների հետ վարվելու և կառավարելու վերաբերյալ որոշում պետք է ընդունի ՀՀ ԿԳՍՆ «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության» գործակալությունը,
- շինարարական աշխատանքները կարող են վերսկսվել միայն ՀՀ ԿԳՍՆ «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության» գործակալության գրավոր թույլտվությունը ստանալուց հետո:

9. Սոցիալ-տնտեսական պայմաններ

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ:
Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքաին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի ամրզերին:
2023թ. մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են՝

- Արդյունաբերություն՝ 11.0%
- Գյուղատնտեսություն՝ 8.7%
- Շինարարություն՝ 12.2%
- Մանրածախ առևտուր՝ 4.9%
- Ծառայություններ՝ 3.7%

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:
Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է, որի մեջ առավլ զարգացած են հետևյալ ոլորտները՝

- Սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն)
- Ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն)
- Հիմնական մետաղների արտադրություն (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն)
- Ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն:

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրախետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ::
Բեռնափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Ծաղկաձոր համայնքի Փյունիկ գյուղի բնակչության թիվը 339 է (ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների)
Կառուցվող կայանը գտնվում է Արագածոտն գյուղի արոտավայրերի մոտ: Հնարավոր է, որ՝

1. միայն մոտ գտնվող դաշտերում աշխատող մարդիկ ազդեցության ենթարկվեն փոշու, աղմուկի հետ կապված, որը կլինի միայն շինարարության փուլի ընթացքում
2. մշակված դաշտը ազդեցության ենթարկվի մեքենաների ճանապարհից դուրս երթևեկության պատճառով, ինչի համար պետք է շինարարը պատասխանատվություն կրի և փոխհատուցի ազդակիր անձին:

Արագածոտն գյուղի մշտական բնակչության թվաքանակը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ 1080 է, ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի հրապարակած տվյալների:

Մոտակա բնակավայրի բնակիչների կամ հարակից դաշտերում աշխատողների բողոքների դեպքում ծրագրի տեղանքում առկա կլինի բողոքների գրանցամատյան և ցուցանակ՝ ձեռնարկողի և շինարարի ղեկավարության կոնտակտային տվյալներով: Ստացված բողոքները կդիտարկվեն շինարարի և ձեռնարկողի ղեկավարության կողմից և կտրվեն համապատասխան լուծումներ:

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շին Շողիկ ճամբարի բարեկարգման և մասնակի վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են՝

- մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների, փոշու հետ,
- աղմուկի, թրթռումների հետ,
- թափոնների առաջացման հետ,
- հողային ռեսուրսի աղտոտման հետ
- հողի էրոզիայի հետ
- աշխատողների առողջությանը հասցվող վնասի հետ
- արտակարգ իրավիճակների հետ:

10.1. Մթնոլորտային օդն աղտոտող արտանետումներ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կանխատեսվում է օդի աղտոտում՝

1. անօրգանական փոշու՝ հողային աշխատանքներից (փորում-բեռնում) և մեքենամեխանիզմների տեղաշարժից, հին շենքերի քանդումից
2. ծխագազերի ժամանակավոր արտանետումներով՝ մեքենամեխանիզմների շահագործումից

Անհրաժեշտ է նշել, որ ծրագրի իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը աննշան և խիստ ժամանակավոր բնույթ կկրի և կսահմանափակվի միայն շինարարության փուլում:

10.1.1. Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ[5]

Ճամբարի մասնակի վերակառուցման աշխատանքների ընթացքում **փոշու արտանետումների** շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարի կողմից կիրականացնվեն ստորև նշված միջոցառումները՝

1. շինարարական հրապարակի ցանկապատում, շենքերի և շինությունները ծածկում շինարարությանը հապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
2. շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերի լվացում և դեպի գլխավոր ճանապարհ տանող ելքային ճանապարհին խճի փռում, ինչը կապահովի մեքենամեխանիզմների անիվների մեխանիկական մաքրում ցեխից և փոշուց,
3. փոշեառաջացման կանխարգելման և փոշենստեցման նպատակով օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար կջրվի՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս
4. ավազի, ցեմենտի, գաջի, խճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի տեղափոխում փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
5. հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
6. ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
7. շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Այլ արտանետումները նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով շինհրապարակում կարգելվի՝

1. այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը

[5] «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ121, 1994թ.

գյուղատնտեսական, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում[6]:

2. արտադրության կամ սպառման կամ տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, դրանց շրջակայքում կամ դրանց այրման համար չնախատեսված այլ վայրերում, կաթսայատներում կամ վառարաններում, թափոնների գործածության օբյեկտներում, հատուկ հատկացված տեղերում կամ չարտոնագրված աղբավայրերում,
3. անսարքին մեքենամեխանիզմների շահագործումը. Շինարարը պետք է իրականացնի շահագործվող տեխնիկայի կանոնավոր տեխսպասարկում:

Վերոնշյալ միջոցառումները ամփոփված են «Բնապահպանական, սոցիալական, աշխատանքի առողջության և անվտանգության միջոցառումներ» ծրագրում:

10.1.2. Մթնոլորտային օդ արտանետումների հաշվարկներ

Ինչպես արդեն վերևում նշվել է, շինաշխատանքների իրականացման ընթացքում լինելու են փոշու և ծխագազերի արտանետումներ, որոնց հաշվարկները իրականացված են ստորև:

10.1.2.1. Փոշու արտանետումներ

10.1.2.1.1. Փորման-բեռնման աշխատանքներից արտանետումներ

Ինտենսիվ և չկազմակերպված փոշեգոյացումն առաջանում է նյութերի տեղափոխման/լիցքի, բաց թափքում բեռնման, բեռնաթափման պատճառով և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6/3600$$

K_1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտում՝ 0.05
K_2– 0-50մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում՝ 0.02

[6] բուսականության մեջ պարունակվող CO_2 արտանետումը բացառելու նպատակով

K_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը 1

K_4 - արտաքին ազդեցություններից նյութի պաշտպանություն՝ 1

K_5- - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը՝ 0.6

K_6 – գործակից, որը հաշվի է առնում պահվող նյութի մակերևույթի պրոֆիլը՝ 1.6

K_7-գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը 1

B- գործակից, որը հաշվի է առնում նյութի անկման/բեռնաթափման բարձրությունը՝ 1.5մ[7],

G-հանվող գրունտի քանակը 2806մ^3 (սրա մեջ ներառված է 1650մ^3 հանույթ և ևս 1156 մ^3 հողի բեռնում և տեղափոխում՝ տարածքի համահարթեցման նպատակով)՝ հաշվի առնելովհողային զանգվածի միջին տեսակարար կշիռը, դա համարժեք կլինի 2722 տ:

1 ժամում հանվող և տեղափոխվող գրունտի քանակը կկազմի

2722 ÷ 440շին/ժամ=6.2տ/ժ

Q=0.05 x 0.02 x 1 x 1x 0.6 x 1.6 x 1 x 1.5 x 6.2= 0.0089գ/վրկ

կամ

Q=0.0089 x 3600x 440 ÷ 10^6 = 0.014տ/շին.[8]

10.1.2.1.2. Մեքենամեխանիզմների շահագործումից փոշու արտանետումներ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում և հաշվարկվում է հետևյալ բանաձևով[9]՝

$$Q=C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times q_1 \times C_6 \times C_7/3600 + (C_4 \times C_5 \times C_6 \times q'_2 \times F_0 \times n)\ գ/վ$$

Որտեղ

[7] Սա միջինացված բարձրություն է, որտեղ հաշվի է առնվել ոչ միայն հանվքղ գրունտի բեռնում ինքնաթափ բեռնատար, այլ նաև քանդվող շենքերի բարձրությունը, որտեղից նյութերը ընկնում են գետնին

[8] Այստեղ հաշվի է առնված ծրագրի ընդհանուր ճամսվա ժամկետից 2.5 ամիսը, որի ընթացքում է տեղի ունեում արտանետումներ (հողային աշխատանքներ, շենքերի քանդում և տարածքի համահարթեցում)

[9] «Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов» Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի

C_1- գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռնունակությունը- 1.3
C_2- գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը – 1
C_3 - գործկից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը՝ 1
C_4- գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը - 1.5[10]
C_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը՝ 1
C_6 – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևութային շերտի խոնավությունը՝ 0.1 (ինչի դեպքում K5 գործակիցը հավասար է 1)
C_7 – գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը՝ 0.01
N – բոլոր տրանսպորտների վազքընթացի թիվն է ժամում՝ 12
L- մի վազքի երկարությունն է 2 կմ
n- մեքենամեխանիզմների թիվն է՝ 4
q_1- 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ՝ 1860
q'_2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումներ– 0.002
F_0 – պլատֆորմի միջին ընդհանուր մակերեսն է 25

Q=1.3 x 1 x 1 x 12 x 2 x 1860 x 0.1 x 0.01/3600 + 1.5 x 1x 0.1 x 0.002x25x4=~0.016+0.03=~0.046գ/վ

$Q1_{\text{Շին.}}$ = 0.046 x 55 օր[11] x 8ժամ x 3600/10^6=0.07տ/շին.

[10] Պայմանավորված է ապամոնտաժվող կառույցներից մեծ կտորներով առաջացող շինաղբ, որը զբաղեցնում է մեծ մակերես

[11] Հողային և քանդման աշխատանքների, ինչպես նաև համահարթեցման ընդհանուր տևողությունը՝ 2.5 ամիս

10.1.2.2. Դիզելային վառելիքի այրումից առաջացող արտանետումներ

Շինհրապարակում շահագործվող մեքենամեխանիզմները ներկայացվում են ստորև՝

Անվանում	Քանակ հատ	Շահագործման տևողություն ժամ	Վառելիքի ծախս լ/ժ	Վառելիքի ընդհանուր ծախս լ/ժ
Էքսկավատոր բեռնիչ JCB3CX	2	275	25	6875
Բեռնատար ինքնաթափ КАМАЗ 5511	1	150	5.6	840
Ավտոկռունկ МАЗКС 5576Б	1	40	30	1200
Բետոնախառնիչ СБ-69Б	1	38	20	760

Աղյուսակ 9՝ Դիզվառելիքի սպառման ծավալ

Եթե դիզվառելիքի ծախսը 9675լ կամ 9675լ=7.74տ/շին.

7.74տ ÷ 55օր/շին.= 0.14տ/օր

Դիզելային վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի[12] հիման վրա:
Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակում՝

Վառելիքի տեսակ		Նյութի անվանումը						
Դիզելային վառելիք	NO_x	CH	ՑՕՄ	CO	N_2O	CO_2	SO_2	ՊՄ
	42.3	0.243	8.16	36.4	0.122	31.38	0.002	4.3

[12] Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը «Core Inventory of Emissions in Europe» (այսուհետ՝ CORINAIR) «Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում» մեթոդոլոգիային համապատասխան

Աղյուսակ 10: տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Դիզելային վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակր նյութերի արտանետումները բերված են աղյուսակում, որտեղ միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:
Ծծմբի անհիդրիդի (SO2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում ամբողջ ծծումբը վերածվում է SO_2-ի: Այդ դեպքում կիրառվումէ CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը՝

$$SO2_{արտ} = 2\Sigma ksb,$$

որտեղ՝
ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002տ/տ
b-ն վառելիքի ծախսն է:

$$SO2_{արտ} = 2 \times 7.74 \times 0.002 = \sim 0.03տ/շին.$$

կամ

$$SO2_{արտ} = 0.0189գ/վրկ$$

Դիզ.վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են ստորև՝

Մեքենամեխանիզմի կատեգորիա	Վնասակար նյութ	Տեսակարար արտանետումներ գ/կգ	Արտանետումներ տ/շին.	Արտանետումների քանակ գ/վրկ
Մեծ բեռնունակության մեքենամեխանիզմ	CO	36.4	0.281	0.177
	CH	0.243	0.0018	0.0011
	No_x	42.3	0.327	0.206
	N_2O	0.122	0.00094	0.00059
	CO_2	31.38	0.242	0.152
	ՊՄ	4.3	0.033	0.02

Աղյուսակ 11՝ Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների հաշվարկ

Ճամբարի մասնակի վերակառուցման և բարեկարգման ընթացքում արտանետվող նյութերը գտնվում են թույլատելի սահմանային նորմերողմ, իսկ շինարարությունը, հետևաբար նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կրելու են ժամանակավոր բնույթ:

Հաշվի առնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները՝ ստորև աղյուսակում ներկայացվում է այդ հաշվարկների ամփոփումը՝

Աշխատանք-ների տեսակները և տեղամասերը			**Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը տ/շինարարություն, գ/վրկ**					
	Անօրգանա-կան փոշի	**NO_x**	**CH**	**CO**	**N_2O**	**CO_2**	**SO_2**	**ՊՄ**
Փորման-բեռնման, քանդման աշխատանքներ	0.014տ/շին. 0.0089գ/վրկ	-	-	-	-	-	-	-
Տրանսպորտայ ին միջոցների տեղաշարժ	0.07տ/շին. 0.046գ/վրկ	-	-	-	-	-	-	-
Դիզվառելիքի այրման արտանետումն եր	-	0.327 տ/շին. 0.206գ/վրկ	0.0018տ/շին. 0.0011 գ/վրկ	0.281 տ/շին. 0.177գ/վրկ	0.00094տ/շին. 0.00059գ/վրկ.	0.242տ/շին. 0.152գ/վրկ	0.03տ/շին. 0.0189գ/վրկ	0.033տ/շին. 0.02գ/վրկ
Ընդամենը	**0.084տ/շին. 0.054գ/վրկ**	**0.327 տ/շին. 0.206գ/վրկ**	**0.0018տ/շին. 0.0011 գ/վրկ**	**0.281 տ/շին. 0.177գ/վրկ**	**0.00094տ/շին. 0.00059գ/վրկ.**	**0.242տ/շին. 0.152գ/վրկ**	**0.03տ/շին. 0.0189գ/վրկ**	**0.033տ/շին. 0.02գ/վրկ**

Աղյուսակ 12՝ Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ընդհանուր քանակ

10.2. Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող փոշին նվազագույնի հասցնելու նպատակով ջուրն օգտագործվելու է շինարարական հարթակների ջրցանի, հանվող գրունտի խոնավեցման, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների կոմունալ-կենցաղային կարիքների ապահովման համար: Ձեռնարկողի կողմից ջուրը տեխնիկական նպատակներով կվերցվի խորքային հորից (տեղադրված է ջրաչափ), իսկ խմելու նպատակով՝ միայն Ձեռնարկողի կողմից վիզուալ զննման ու լաբորատոր փորձաքննության դրական արդյունքների ստացման դեպքում, այլապես խմելու ջուրը տեղանք կմատակարարվի տարբեր ծավալի տարաներով, որոնք ձեռք կբեվեն Փյունիկ գյուղի վաճառակետերից:
Ճամբարի տարածքում առկա են սանիտարահիգիենիկ բոլոր հարմարությունները:

10.3. Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Աշխատանքային օրերի թիվը՝ 132 օր(6 ամիս):
Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{խ.տ.}=(n \times N + n_1 \times N_1) \times T$$

n – ինժեներատեխնիկական աշխատողների (ԻՏ) թվաքանակն է՝	**6 մարդ**
N - ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է՝	**0.016 մ³ օր/մարդ**
n_1 – բանվորների թվաքանակն է՝	**50 մարդ**
N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է՝	**0.025 մ³ օր/մարդ**
T – աշխատանքային օրերի թիվն է՝	**132**

$$W_{խ.տ.}=(6 \times 0.016 + 50 \times 0.025) \times 132= 178 \text{ մ}^3$$

Խմելու և կենցաղային միջին օրական ջրապահանջը կլինի՝ 0.56մ³

10.4. Տեխնիկական ջրօգտագործում

ա) Աշխատանքային հրապարակների ջրցան

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել աշխատանքային հրապարակներիջրցան:
Շինարարության տևողությունը 132 օր է և այս ընթացքում միայն չոր եղանակային պայմաններում օրական 1 անգամ կիրականացվի 3000մ^2 աշխատանքային հրապարակիջրցան, քանի որ տարածքն արդեն իսկ խոնավ գոտում է գտնվում, անձրևային օրերը կկազմեն շինարարության տևողության՝ 132 օր, մոտ 15 %՝ 20օր:
Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

3000մ^2 x 0.0015մ^3/մ^2 = 4.5մ^3/օր

որից՝
0.0015մ^3/մ^{2}կամ 1.5լ/մ^2 – ջրցանման նորմն է

Ամբողջ շինարարության ընթացքում (հաշվի առնելով անձրևային օրերը՝ 20օր)կծախսվի՝

112օր x 4.5մ^3/օր = 504մ^3

բ) հողային զանգվածի խոնավեցում

Փորման աշխատանքների արդյունքում հանվելու էընդհանուր 1650 մ^3 հողաշերտ և գրունտ, որն ամբողջովին կիրառվելու է տարածքի անհարթությունները հավասարեցնելու, ետլիցիքի համար, հետևաբար հանված գրունտի խոնավեցում չի կատարվելու, քանի որ հանված գրունտը աշխատանքային օրվա ավարտին արդեն կկիրառվի տարածքի անհարթությունները շտկելու նպատակով՝ պահպանելով շինհրապարակի կոկիկությունը և մաքրությունը, հետևաբար նաև աշխատանքի անվտանգությունը:

10.5. Տեխնիկական ջրահեռացում

Տեխնիկական ջրի օգտագործումն ամբողջությամբ հանդիսանում է անվերադարձ ջրօգտագործում: Աշխատանքային հարթակների ջրցանը հաշվարկված է այնպես, որ նստեցվի փոշին և չառաջանա արտահոսք:

<u>Կոմունալ-կենցաղային ջրահեռացում</u>

Խմելու կենցաղային ջրահեռացումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{ջ.հ.}=W_{խ.տ.} - ԿS,$$ որտեղ՝

ԿS-ն ջրօգտագործման կորուստն է տոկոսներով՝ 5%

ԿS= $W_{խ.տ}$178x0.05=8.9մ^3

Շինարարության ամբողջ տևողության ընթացքում խմելու-կենցաղային ջրահեռացումը կլինի՝
$W_{ջ.հ.}$= 178-8.9=169.1մ^3

Օրական ջրահեռացումը կլինի՝ 1.28մ^3

10.6. Հողօգտագործում

Աշխատանքների ընթացքում շինարարի աշխատողները հստակ հրահանգավորում կստանան ճամբարի առանձնացված տարածքից դուրս այլ տարածքներ մուտք չգործել և որևէ հողամաս, բերք չվնասել, հակառակ դեպքում՝ շինարարը պարտավոր է ըստ ՀՀ օրենսդրության ապահովել համապատասխան վնասի փոխհատուցում ազդակիր անձին:

10.7. Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում

Գոյություն ունի հողի և ստորգետնյա ջրերի աղտոտման (անձրևի դեպքում) ռիսկ, օրինակ՝ շինարարական տեխնիկայի և մեքենաների քսայուղերի/վառելիքի արտահոսքի հետևանքով, որից կարելի է խուսափել պատշաճ տեխնիկական սպասարկման միջոցով: Բացի այդ, շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող յուղի/վառելիքի թափոնները կարող են աղտոտել հողը: Յուղի արտահոսքից կամ տեխնիկայի վերալիցքավորումից առաջացած հողի և ջրի աղտոտումը կանխարգելող միջոցառումները պետք է իրականացվեն շինարարության փուլում, օրինակ՝

- արտահոսքից խուսափելու համար պահեստավորված տարողություն 110% պահելու հնարավորություն ունեցող տարաների կիրառում,

- վառելիքով լցավորվող տեխնիկան պետք է կահավորված լինի արտահոսքի կաթիլային որսման դույլիկով
- խողովակներից, միացման կետից և բաքերից արտահոսքի հայտնաբերման նպատակով պետք է կատարվի կանոնավոր զննում
- միայն պատշաճ ուսուցում անցած և լիազորված աշխատողների մուտքի ապահովում դեպի վտանգավոր թափոնների (յուղ, վառելիք, ներկ) պահման տարածք
- յուղ, վառելիք պարունակող բաքերը պետք է տեղադրվեն տակդիրների վրա, որոնք պետք է ունեն թափված նյութը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս, քան ընդհանուր ծավալի 110%-ի չափով, պետք է պահվեն պաշտպանված մակերևույթ և ծածկ ունեցող տարածքում, մնացած թափոններից կամ պահեստում պահվող նյութերից առանձին:

Արտահոսքի հավաքման համար միջոցների/պարագաների արկղիկը պետք է պահվի վառելիքի, յուղի պահեստարաններում և տեխնիկայի սպասարկման տարածքներում: Վտանգավոր հեղուկների պահվող տարածքում արտահոսքի կանխարգելիչ նյութերը ներառում են՝

- համապատասխան պաշտպանիչ արտահագուստ և անվտանգության պարագաներ
- աբսորբեր կամ ավազով տարա/պարկ
- պոլիէթիլենե տոպրակ և չվնասված կոնտեյներ՝ կափարիչով
- յուղով աղտոտված նյութեր պարունակող կոնտեյներների վրա պետք է լինի համապատասխան պիտակ և պետք է պահվի փակ տարածքում կամ ծածկի տակ:

Արտահոսքի դեպքում անհրաժեշտ է՝

- կիրառել ճիշտ անձնական անվտանգության պարագաներ
- փակել արտահոսքի աղբյուրը
- կիրառել գոգաթիակ հեռացնելու համար աղտոտված հողը
- աղտոտված հողը լցնել պլաստիկ պարկի մեջ՝ նախքան կոնտեյների մեջ տեղադրելը
- տեղեկացնել պատվիրատուի առողջապահության, անվտանգության, բնապահպանության մասով մասնագետին
- գրանցել դեպքը պատահարների/արտահոսքերի գրանցամատյանում
- ուսումնասիրություն կազմակերպել՝ արտահոսքի պատճառը հայտնաբերելու նպատակով
- իրականացնել ուսուցում «քաղած դասերի» հիման վրա:

Ներկման և այլ ծածկող նյութերի կիրառման դեպքում հատուկ պաշտպանիչ թաղանթ կգցվի այդ հատվածի տակ, որպեսզի ներկելու ընթացքում ներկի կաթիլները չթափվեն հողի վրա:

Ճամբարի տարածքում պետք է ապահովվի լուսավորություն գիշերային ժամերին: Բոլոր ժամանակավոր կառույցները և միջոցները առկա են ճամբարում, օրինակ՝ աշխատողների համար կացարան, որտեղ սանիտարահիգիենիկ բոլոր պայմաններն ապահովված են: Աշխատողների ժամանակավոր կացարանից և ճաշարանից որոշ հեռավորության վրա պետք է հիմնվի շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի պահեստավորման և մեքենամեխանիզմների կայանման համար տարածք:
Ճամբարի տարածքում շինարարական նյութերի և թափոնների պահեստավորումըկարող են առաջացնել աղտոտում աղբի, ինչպես նաև շինարարական սարքավորումների շահագործման և տեխնիկայի սպասարկման արդյունքում առաջացող արտահոսքերի պատճառով: Պատշաճ շինարարական ճամբարը պետք էհամալրված լինի շինարարության ընթացքում ամբողջ աշխատուժի համար բավարար աղբամաններով, որոնք պետք է ունենան կափարիչներ:
Կենցաղային աղբի հեռացում պետք է իրականացվի առնվազն 2 օրը մեկ:
Կենցաղային և շինարարական աղբի հեռացման պայմանագիր կկնքվեն համայնքապետարանի հետ:
Շինարարական աշխատանքների ավարտից հետո պետք է հեռացվեն բոլոր ժամանակավոր կառուցվածքները/օբյեկտները և իրականացվի տարածքի ներդաշնակեցում լանդշաֆտի հետ:

10.8. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ռիսկեր՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկատրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում վթարների հետ: Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է՝

1. մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնեն հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և ստանան աշխատանքի անցնելու թույլտվություն աշխղեկի և աշխատանքի առողջության և անվտանգության աշխատողի կողմից,

2. ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս՝ օրինակ պատշաճ աստիճաններ, որոնք պետք է ունենան 4 հենման կետ հարթ մակերեսի վրա, ինչպես նաև բազրիք կամ լաստակներ (Харачо),որոնք պետք է պարբերաբար տեսողական զննվեն և այդ մասին վկայող համապատասխան պիտակներ փակցվեն,ապահովական ճոպան (страховочный трос)
3. պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, սանիտարահիգիենիկ պայմանները,
4. ապահովել առաջին բուժօգնության արկղիկներ, անհատական և պաշտպանիչ միջոցներ (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն),
5. շինհրապարակում և հարակից տարածքներում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ,
6. վերահսկել շահագործվող սարքավորումների տեխնիկական վիճակը, բացառվելու է գործունեության վայրում խոտանված նյութերի և սարքերի կուտակումները,
7. բեռնափոխադրման ընթացքում նվազագույնի հասցնել երթևեկությունը խոչընդոտող գործողությունները՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, որոնց չպահպանման դեպքում կկիրառվի կարգապահական տույժ,
8. ապահովել բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաների համապատասխանությունը պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, օրինակ՝ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն, ըստ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի,
9. ապահովել շինհրապարակի հավասարաչափ լուսավորություն,
10. եռակցման և ներկման աշխատանքները կատարել բացօթյա, մեկուսացնել հոսանքատար մասեր
11. շենքերի քանդման ընթացքում ապահովել օբյեկտի հոսանքազրկումը և տեղադրել այդ մասին վկայող տեղեկատվական նշան/գրառում
12. վարել տեխնիկական հսկողության անհատական մատյաններ:

Շահագործման փուլում բոլոր ինժեներները պետք է ունենան համապատասխան որակավորում և նմանատիպ աշխատանքի իրականացման համար վկայական, իսկ աշխատանքներից առաջ գլխավոր ինժեներ-էներգետիկի և շինարարի կողմից կիրականացվի հրահանգավորում, ըստ էլեկտրակայանքների տեղադրման, լարման տակ դնելու և շինարարական աշխատանքների անվտանգության կանոնների և, համապատասխանաբար, կվարվի հրահանգավորման մատյան(Տե՛ս Հավելված 3):


10.9. Շինհրապարակում սանիտարակենցաղային պայմաններ

Ինչպես արդեն նշվել է «ՇԻՆ ՇՈՂԻԿ» ճամբարը գործող ճամբար է, ներկայում նախաձեռնվել է ճամբարի վերակառուցման վերջին 3-րդ փուլը: Հետևաբար, վերակառուցման աշխատանքներում ներգրավված անձնակազմի համար նախատեսվում է առանձին սենյակ և հանգստասենյակ հատկացնել մինչև 3-րդ փուլը ճամբարի վերակառուցված շենքում, որն ապահովված է բոլոր սանիտարակենցաային պայմաններով, ինչպես նաև ունի առանձին ճաշարան: Հարկ է նշել, որ ոչ տեղացի ինժեներներին ճամբարում տրամադրվել է նաև ժամանակավոր կացարան: Աշխատողների սանիտարակենցաղային պայմանների [13] վերաբերյալ նկարները ներկայացվում են ստորև՝





[13] Տեղացի աշխատողների համար նույնպես նախատեսվել է ցնցուղարան, որովհետև վերջիններս կատարելու են ծանր ֆիզիկական աշխատանքը, որից հետո հիգիենայի պահպանման նպատակով անհրաժեշտ է ցնցուղ ընդունելը:



Լուսանկարներ 1՝ Սանիտարական-կենցաղային պայմաններ

10.10. Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկեր՝ կապված բնական աղետների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ: Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է՝

1. տեղադրել տեղեկատվական ցուցանակներ՝ նշելով օբյեկտի նախագծողի, շինարարի և ձեռնարկողի վերաբերյալ տեղեկատվություն (անվանում, կոնտակտային տվյալներ և այլն), շինթույլտվություն, շինարարության սկիզբը և ավարտի վերաբերյալ տեղեկություն

2. շինհրապարակում ապահովել հակահրդեհային կրակմարիչներ, տեսահսկման և հակահրդեհային ազդանշանային համակարգեր, հակահրդեհային միջոցառումների վահանակներ
3. շինհրապարը/ճամբարը, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները պարբերաբար մաքրել հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից
4. հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար
5. տեղադրել հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար
6. դադարեցնել շինաշխատանքները մթնոլորտային տեղումների, քամու ուժգնացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ:

10.11. Հողի էրոզիա

Շինարարության ընթացքում շինտեխնիկայի շահագործումից տեղի է ունենում հողի խտացում, տոփանում, որի արդյունքում կարող է առաջանալ հողի էրոզիա, այսինքն՝ տեղումների ընթացքում անձրևաջրերի դրենաժ չի լինում հողում, և, փոխարենն առաջանում է անձրևաջրերի հոսք՝ հանգեցնելով հողի էրոզիայի: Հետևաբար, շինաշխատանքներից ավարտից հետո, խտացած հողը պետք է փխրեցվի՝ բուսականության աճի ապահովման, այսպիսով հողի էրոզիայի կանխարգելման համար:
Հարկ է նշել, որ տարածքը հարթ է. որևէ սողանք չի առաջանա:

Հողի հանված բերրի շերտի պահպանումը կիրականացվի, ըստ ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի No. 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագծմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N.1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման:

10.12. Աղմուկ և Թրթռումներ

Թրթռումներ կարող են առաջանալ մեքենամեխանիզմների, սարքավորումների շահագործումից: Այս թրթռումների պատճառով որևէ կառույց չի վնասվի, քանի որ մոտակայքում չկան այդպիսիք:

Աղմկոտ աշխատանքային միջավայրում բանվորները կկրեն ականջների համար պաշտպանիչ սարքեր, որպես իրենց անհատական պաշտպանության միջոցների մի մաս, եթե նրանք ենթարկվեն 80դԲԱ-ից բարձր աղմուկի մակարդակի ազդեցության: Բնակավայրերին մոտ ընթացող աշխատանքների, բեռնափոխադրումների դեպքում շինարարը պետք է վերահսկի բոլոր սարքավորումներից առաջացող աղմուկի մակարդակը՝

- Շինարարական աշխատանքները/բեռնափոխադրումները պետք է իրականացվեն ժամը 9:00-ից մինչև 18:00
- Սարքին վիճակում պետք է պահվեն շահագործվող մեքենամեխանիզմները
- Անհրաժեշտության դեպքում մեքենամեխանիզմների վրա խլացուցիչներ պետք է տեղադրվեն:

Սակայն սույն ծրագրի շրջանակերում ոչ մի պայթեցման և ուժեղ թրթռում առաջացնող մեքենամեխանիզմ (օրինակ՝ ճանապարհային թրթռագլդոն) չի կիրառվի, հետևաբար՝ թրթռումների ազդեցությունը կլինի շատ չնչին:
Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց աղմուկի մակարդակը չգերազանցի 85-95դԲԱ, որի դեպքում աշխատողի համար հնարավոր կլինի տեխնիկայի խցիկում ապահովել 80դԲԱ աղմուկի մակարդակ:

Թրթռումների մոնիթորինգի, վերլուծության և գնահատման արդյունքները պետք է ստացվեն ըստ հետևյալ նորմերի՝

- ՀՀ առողջապահության նախարարի հրամանը «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին,
- ГОСТ 31191.1-2004 (ISO 2631-1). "Вибрация и удар. Измерение общей вибрации и оценка ее воздействия на человека. Часть 1: Общие требования",
- ГОСТ 31319-2006 (ЕН 14253:2003) “Вибрация. Измерение общей вибрации и оценка ее воздействия на человека. Требованиякпроведениюизмерений нарабочихместах”,
- ГОСТ 12.1.012-2004 “Система стандартов безопасности труда.Вибрационная безопасность. Общие требования”.

10.12.1. Աշխատատեղերում, մոտակա բնակելի տարածքում առաջացող աղմուկի հաշվարկ

Ավտոմեքենաների և սարքավորումնեի աշխատատեղերում աղմուկի մակադրակը 80դԲ(A)գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանիչ միջոցներ (օրինակ՝ ականջակալներ)[14]:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերին կազմում է 55դԲ (A) կամ ֆոնային մակարդակի դեպքում՝ ոչ ավել, քան 3դԲ (A) ավելացում:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը աշխատակիցների և շրջակա միջավայրի վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտներ են հանդիսանում հարակից բնակելի և հասարակական շենքերը, որոնց պատերը և երկխցիկանի պատուհաններն արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչ դեռ: **Շատ կարևոր հանգամանք է նաև վերակառուցվող «ՇԻՆ ՇՈՂԻԿ» ճամբարի շրջապատված լինելը անտառով, որը նույնպես ձայնակլանման դեր է տանում**:

Շինհրապարակում շահագործվող մեքենամեխանիզմների ցուցակ

Մեքենամեխանիզմի անվանումը	Քանակը հատ	Աղմուկի մակարդակը վարորդի խցիկում
Էքսկավատոր բեռնիչ JCB3CX	2	(L_{w1}) 95դԲ
Բեռնատար ինքնաթափ KAMA35511	1	(L_{w2}) 78դԲ
Ավտոկռունկ МАЗКС 5576Б	1	(L_{w3}) 100դԲ
Բետոնախառնիչ СБ-69Б	1	(L_{w4}) 96դԲ

Աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, աղմուկը լինելու է ոչ անընդմեջ, այլ կրելու է ժամանակավոր բնույթ:

[14] ՀՀ առողջապահության նախարարության 06 մարտի 2002թ. «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» No. 138 հրամանի

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով[15]՝

$$L=L_w + 10\lg\left[\frac{X^{\Phi}}{\Omega r^2} + \frac{4}{kB}\right]$$

Ելակետային տվյալներ

Հողային աշխատանքների փուլ

- Էքսկավատոր-բեռնիչ
- Բեռնատար ինքնաթափ

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ
- Վերամբարձ կռունկ
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ

Բարեկարգման/հարթեցման փուլ

- Էքսկավատոր-բեռնիչ

Սույն հաշվարկի դեպքում հաշվի է առնվում երկու օբյեկտ՝

- Մոտակա բնակելի տուն՝ շինհրապարակից հեռավորությունը 277մ,
- Մոտակա ճամբար՝շինհրապարակից հեռավորությունը 80մ:

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- X=1 (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- Φ=1 (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- Ω=2π(կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- k=1 (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- B=200 (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ^2):

[15] Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի

10.12.1.1. Աղմուկի մակարդակի հաշվարկ հարակից «Զեփյուռ»ճամբարի համար

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն ՝

- **Էքսկավատոր-բեռնիչ աղմուկի մակարդակ՝**

L_{w1} = 95+10*$\log_{10}$ ((1*1/2π*80^2)+4/1*200)=95+10*$\log_{10}$(0.0200248)=**78.01դԲ**

- **Բեռնատար-ինքնաթափի աղմուկի մակարդակը հետևյալն է՝**
  L_{w2}=78 + 10*$\log_{10}$ ((1*1/2/π*80^2)+4/1*200)= 78+10*$\log_{10}$ (0.0200248)=**61.01դԲ**

- **Ավտոկռունկիաղմուկի մակարդակը հետևյալն է՝**
  L_{w3}=100+ 10*$\log_{10}$ ((1*1/2/π*80^2)+4/1*200)= 100+10*$\log_{10}$ (0.0200248)=**83.01դԲ**

- **Բետոնախառնիչի աղմուկի մակարդակը հետևյալն է՝**
  L_{w4}=96 + 10*$\log_{10}$ ((1*1/2/π*250^2)+4/1*200)= 96+10*$\log_{10}$ (0.0200248)=**79.01դԲ**

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, ապա դրանք համադրվում են հետևյալ կերպ՝

$LA_{էկվ}$=10*$\log_{10}$($2*10^{7,8}$+$10^{6.1}$+$10^{8.3}$+$10^{7.9}$)=10*$\log_{10}$(1540409449. 17)=10*9. 1876=**91. 876դԲ**

10.12.1.2. Աղմուկի մակարդակի հաշվարկ մոտակա բնակելի տան համար

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն ՝

- **Էքսկավատոր-բեռնիչ աղմուկի մակարդակ՝**

L_{w1} = 95+10*$\log_{10}$ ((1*1/2π*277^2)+4/1*200)=95+10*$\log_{10}$ (0.02000207)=**78դ.01Բ**

- **Բեռնատար-ինքնաթափի աղմուկի մակարդակը հետևյալն է՝**

L_{w2}=78 + 10*$\log_{10}$ ((1*1/2/π*277^2)+4/1*200)= 78+10*$\log_{10}$ (0.02000207)= **61.01դԲ**

- **Ավտոկռունկի աղմուկի մակարդակը հետևյալն է՝**

L_{w3}=100 + 10*$\log_{10}$ ((1*1/2/π*277^2)+4/1*200)= 100+10*$\log_{10}$ (0.02000207)=**83.01դԲ**

- **Բետոնախառնիչի աղմուկի մակարդակը հետևյալն է՝**

L_{w4}=96 + 10*$\log_{10}$ ((1*1/2/π*3000^2)+4/1*200)= 96+10*$\log_{10}$ (0.0200000177)=**79.01դԲ**

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, ապա դրանք համադրվում են հետևյալ կերպ՝

$LA_{էկվ}$= 10*$\log_{10}$ (2*10 ^{7,8}+ 10 $^{6.1}$+$10^{8.3}$+$10^{7.9}$)= 10*$\log_{10}$ (1540409449. 17)=10*9. 1876= ~**91. 876դԲ**

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850կգ/մ$^{2:}$

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$L_{աղ}$=23*lg*$m_է$ – 10դԲ, երբ m≥200կգ/մ^3

$L_{աղ}$=13*lg*$m_է$ – 13դԲ, երբ m≤200կգ/մ^3

Որտեղ $m_է$=K*m-մակերեսի խտության էկվիվալենտն է

m-մակերեսի խտությունն է, կգ/մ^3

K գործակից է,որը հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850կգ/մ^3 է

$m_է$=7850*1=7850

$L_{աղ}$=23*lg*$m_է$-13=23*lg(7850)-13=23*3.894-10=89.562-10=79.56դԲ

Շինհրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

$LA_{տար}$=$LA_{էկվ}$-$L_{աղ}$=91. 876-79. 56=12. 316դԲ;

Մոտակա շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 12. 316դԲ, ինչը նորմայի սահմանում է:

10.12.2. Աշխատատեղերում, մոտակա բնակելի տարածքում առաջացող թրթռումներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆՈ 2.2.4-009-06 հաստատելու մասին» N 533-Ն հրամանի՝ աշխատատեղերում և բնակելի սենքերում, հիվանդասենյակներում և հանգստյան տներում թրթռման թույլատրելի մակարդակները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակներում՝

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X_0 Y_0 և Z_0 առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ. 10^{-3}	դԲ	մ/վրկ. 10^{-4}	դԲ
2	4,0	72	3,2	76
4	4,5	73	1,8	71
8	5,6	75	1,1	67
16	11,0	81	1,1	67
31. 5	22,0	87	1,1	67
63	45,0	93	1,1	67
Ճշգրտված ու համարշեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	4,0	72	1,1	67
1. Թույլատրվում է ցերեկային ժամերին թույլատրելի մակարդակներից գերազանցում 5դԲ-ով: 2. Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակներին մտցվում է ուղղում -10դԲ, իսկ բացարձակ արշեքները բազմապատկվում են 0,32-ով: 3. Հիվանդասենյակներում, հանգստյան տներում, մանկական և նախադպրոցական կազմակերպություններում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները անհրաժեշտ է նվազեցնել 3դԲ-ով:				

Աղյուսակ 13՝ Բնակելի սենքերում, հիվանդասենյակներում եվ հանգստյան տներում թրթռման թույլատրելի մակարդակներ

